ԸՆԴԵՑԻՆ ՄԵՏԵՆԵՓԵՐԵՆ

ԹՔԼ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՎԻՊԸ

ՀԱՆԳԵՐՁ

ՓՆՆԱԴՐԱՏՈՒԹԵԱՄԲ ԳՐԵՑ

ԲԱԳՐԱՏ ԽԱԼԱԹԵԱՆՑ

ՎԻԵՆՆԱ

ՄԽԻԹԱՐԻԱՆ ՏՊԱՐԱՆ

1903.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՒՃԱՋՆԱԿԱՆ ՎԷՊԸ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՔԱՆ

ԹՎ ԼԵ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՎԻՊԸ



ՎԻԵՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1903.

891.99.09
Խ-12
Գրաբ.
398.22
Ա 11/30992
Հ3-012

Թարգմանեց է 1901 թ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՎԷՊԸ

ՀԱՆԴԵՐՁ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՄԲ ԳՐԵՑ

ԲԱԳՐԱՏ ԽԱԼԱԹԵԱՆՑ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1903.

ԶԻՏԻԿ ԽԻՊՈՑԵՆՑ

ՀԱՏԻԿ ԽԱՊՈՅԵՆՑ

Խապոյենց մնից ՀԱՏԻԿԸ մօտ 50 տարեկան. միջակ հասակի տղամարդ է, բոլորովին առոյգ դէմքով, լայն կրծքով եւ կլոր երեսով, ծածկուած սեւ կոշտ մազերով. արծուի քիթը տալիս է նորան վեհանձն եւ համարձակ արտայայտութիւն: Նորա հայրենիքն է Մոկս գաւառի Գինեկանց գիւղը. գլխաւոր պարապմունքն է եղել դաշտային աշխատանք եւ կտաւագործութիւն: Դաւթի եւ Մհերի գրոյցն եւ այլ աւանդութիւններ նա լսել է 15 տարեկան հասակում նոյն գիւղի բնակիչ Գրիգորից, որ իբրեւ „ասող" հռչակուած էր ամբողջ գաւառում: Հատիկը քսան տարեկան հասակից կրել է երկարամեայ պանդխտութիւն, երեք անգամ բախտ որոնելով Պոլսում, որտեղ նա անց է կացրել նախ 3, ապա 2 եւ վերջապէս ամբողջ 8 տարի, քանելով Հրապարակում: Վերջին 4 տարին նա անց է կացրել իւր հայրենի գիւղում, որտեղից ապա 1898ին եկաւ Էջմիածին. այստեղ նոյն թուին մենք գրի առանք նորանից մեր "Քըլօր Դաւիթը եւ Մհերը", որ մեր ժողովածուի մէջ ընդարձակագոյնն եւ գեղեցկագոյնն է հանդիսանում. գրոյցս կրկնել տուած ենք երեք անգամ, եւ երեք անգամ էլ Հատիկը պատմել է գրեթէ բառացի, առանց որեւէ փոփոխութիւնների:

---

1. ՈՂՈՐՄԻՆ.



2 ՄՍՐԱՄԵԼԻԻ ԵՐԳԸ.



ՀԵՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՎԷՊԸ

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Հայ գիւցազնական վէպը կպչում է Վանայ ծովի արեւմտեան ափերին, իբրեւ կարկաչահոս սրընթաց գետակ բղխում այն երկրի լեռներից, որ ժողովրդի բերանում Սասուն անունն է կրում։ Տեղի բնական պայմաններն, ինչպէս՝ բարձրագագաթ անմատոյց լեռները, որ փակում են նորան շորս կողմից, անհաւասար գետինը՝ տեղ տեղ ծածկած խիտ անտառներով, պատառած մթին ձորերով, վերջապէս՝ քրդերի անհանգիստ հարեւանութիւնը պիտի դարձրեր ի վեր կրթէին եւ սնուցանէին այս լեռնականաց մէջ քաջարի, կտրիճ ոգին, որ այժմ էլ կենդանի է ամէն մի պատանի Սասունցու մէջ, որի երեւակայութիւնն դեռ վառ է պահում նախնեաց հերոսագործութեանց յիշատակը։ Ահա թէ ինչպէս է նկարագրում մեր ԺԴ. դարի պատմագիր Թովմաս Արծրունին Խութի՝ Սասունին կից լեռնագաւառի՝ բնակիչների կիսավայրենի բարքը.[1] "...բնակութիւն նոցա ի խորաձորս եւ ի փա-

1 Խութ հնուցն պատկանում էր Տուրուբերանին, իսկ Սասունն՝ Աղձնեաց գաւառին։

պարս (քարանձաւ) լերանց եւ ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց։ Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, եւ այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանշիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրեւ ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով, եւ կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաւորնակ լինելոյ եւ անհամբոյրք միմեանց հանդիպեալք, եւ խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք։ Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչեւ թարգմանաց անգամ կարօտանան. եւ զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. եւ զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատանի փայտատովք սերմանեալ. եւ է զգեստ նոցա ասուիս (բուրդ) ի ծածկոյթ մերկութեանն, եւ օդ ոտից հնարաւորեն զձեւ կօշկաց, ի մորթոց այծից կազմեալ, եւ միով կերակրով եւ միով հանդերձիւ բաւականան զամառն եւ զձմեռն. եւ են ստացեալ զէնս աշտեայս (նիզակ) հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակեն։

"Այլ եւ ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք։ Իսկ վասն ձեռանն անկայուն զօրութեանն

որ այն ինչ յամպոցն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրեւ զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրեւ ընդ ցամաք երկիր։ Եւ են գաղանաբարոյք, արիւնարբուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց, հարազատաց, նաեւ զանձանց եւս. եւ կոչին սոքա մեկնակազէնք սուրհանդակք, բնակեալք ի լերինն, որ բաժանէ ընդ Աղձնիս եւ ընդ Տարօն։... Սոքա են գունահք Ասորոց, որ չուեցին զկնի Ադրամելայ եւ Սանասարայ որդւոյ Սենեքերիմ արքայի թագաւորի Ասորեստանի եւ Նինուէի, յորոյ անուն ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն. եւ են հիւրասէրք, օտարընկալք, պատուադիրք։»[1]

Զարմանալի չէ, որ այս լեռնականների բերանում շարունակ դարեր կենդանի են մնացել տեղական իշխանների, նոցա այլազգեաց դէմ մղած պատերազմների մասին աւանդութիւններ, որոնք ցարդ դեռ թարմ պահպանուել են Մուշի եւ Վանայ գաւառներում։ Այս զրոյցների միջավայրն է կազմում "Սասուն քաղաքը», որտեղ է կեդրոնացած նորա քաջերի գործունէութիւնը։ Եթէ ճիշդ է մեր պատմագրի անձնական դիտողութիւնն, այս անունն՝ ազգագրական տեսակէտից՝ տարածւում էր եւ Խոյթի բնակիչների վերայ։

---

[1] Թովմայի Վարդապետի Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց. Պետերբուրգ 1887, Գլուխ Է. էջ 120—121։

Նախ քան այս դիւցազնական զրոյցների բովանդակութիւնն առաջ բերելը, աւելորդ չեմ համարում պարզել՝ ա. Նոցա աւանդման դիւրաններէրը հայ ժողովրդի մէջ. բ. Նոցա -ր-ե-դ-ի-ն (տեխնիքական) կողմն եւ վերջապէս՝ գ. Նոցա դէղ-ի-ն մշակման նշանակութիւնն։*

Ա. "Հայ դիւցազնէրը"։

Վերջացնելով դաշտային պարապմունքները, հայ գիւղացին սիրում է ձմեռային երկար երեկոները կարճացընել հեքեաթներ, երգեր, առասպելներ ասելով, որ կազմում են նորա միակ հոգեկան զուարճութիւնը։ Բայց նորա ամենասիրելի նիւթն է՝ դիւցազնական զրոյցները, որ նա խստիւ տարբերում է ջինջ-ա- հեքեաթից, նոցանում պտրելով էջ-ի-ն։ Խմբուելով "ասողի" շուրջը տաք խեղդաշունչ "օդայում", որ միայն բարակ ցանկապատով է բաժանուած անասուններից, թէ մեծը եւ թէ փոքրը, բաց ի կանանցից, ուշադրութեամբ ականջ են դնում

---

* Հայ դիւցազնական զրոյցների հաւաքման առաջին փորձը պատկանում է արժանայիշատակ Եպիսկ. Արուանձտեանցին, որ 1874 թ. լոյս ընծայեց իւր գրի առած "Դաւիթ Սասունցին" 1889ին, իբրեւ երկրորդ փորձ, հանդէս եկաւ Մ. Աբեղեանի "Դաւիթ եւ Մհերը", իսկ 1892 թ. հայ բանասէրները ծանօթացան Գարեգին Սարկաւագի "Սասնոյ ծռերի" երկու նոր վարիանտների հետ։ Վերջապէս 1899ին գիտական ուղեւորութեանս ժամանակ Մոսկուայի կայս. Ազգ. ընկ. կողմից Երեւանեան Նահանգում գրի եմ առած մօտ 12 վարիանտներ, որոնցից ընդարձակագոյնը հրատարակած եմ Էջմիածնում 1890 թ. "Թըլոր Դաւիթ եւ Մհեր" վերնագրով։

հնութեան հերոսների "նաղըներին„։ Գրեթէ ամէն մի գիւղ մեզանում ունի իւր "ասողը„, որ երբեմն հռչակւում է ամբողջ գաւառում. սոքա ոչ թէ արհեստով աւանդապահ պատմողներ են, այլ սովորական գիւղացիներ՝ երկրագործներ, դարբիններ, գիւղական սափրիչներ եւ այլն, որ լսել են այս այն զրոյցը "հօրից„, "պապից„, "այս ինչ գիւղի յայտնի ասողից„, "օտարութեան մէջ„ եւ այլն։ Զրուցողը ինքն, կատարելով իւր պատուաւոր դերը, այս աւանդման մէջ զուարճալի բոպէներ է պտրում. բնական է ուստի, եթէ նա աշխատում է երբեմն զարդարել իւր զրոյցը նոր նոր մանրամասնութիւններով եւ կամ զանազան դիւցազնական վէպերից մի ամբողջութիւն կազմել։

Այս դիպողական պատմողներին չպէտք է ի հարկէ շփոթել "աշուղների„ հետ, որոնց արհեստն է կազմում հեքեաթը եւ երգը. իրանց եօթնալար "սազի„ հետ նոքա շրջում են քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ ապրուստ հայթայթելու. նոքա միշտ սիրելի հիւրեր են հարուստ մարդկանց տներում, որտեղ մնում են ամբողջ օրեր։ Մեծ տոներին այն գիւղում, որ իբրեւ սրբավայր է համարւում եւ որտեղ է կուտակւում զանազան տեղերից ժողովրդի խուռն բազմութիւնը, աշուղները մրցում են միմեանց հետ ածելու եւ դժար հանելուկներ լուծելու մէջ. յաղթուածը տալիս է իւր --ը յաղթողին։ Լինելով "աշխարհ ման եկողներ„, նոքա վայելում են ժողովրդի համակրանքը. սոքա

հեռաւոր գիւղերի եւ գաւառների կենդանի հանգոյցներից մէկն են, որ իրանց հետ բերում են մի որ եւ է նոր երգ, առակ, հեքեաթ եւ այլն, եւ կարճ միջոցում տարածում ամբողջ նահանգում։ Հնուց ի վեր գուսանները պատուագոյն դեր են խաղացել ամէն մի ազգի մէջ, լինելով ժողովրդի հոգեւոր կեանքի, նորա աշխարհայեցողութեան բանաստեղծական արտայայտիչները։ Հայ աշուղների ծրագիրը բաղկացած է սովորաբար, բաց ի ժողովրդական երգերից, դիւցազնական հեքեաթներից („Քեռ-Օղլի„, „Շահ Իսմայիլ„, „Շահ Աբաս„, „Արաբի-զանգի„), եւ սիրահարական երգաբանութիւններից („Դահար Միրզայ„, „Քեարամի„ եւ այլն), որ տաճկերէն են աւանդւում։

Այսպիսով ուրեմն, ինչպէս տեսանք, հայ դիւցազնական վէպը ամբողջապէս յանձնուած է այս այն գիւղացու պատահական հետաքրքրութեանը, որ տարւայ միայն որոշ ժամանակ ազատ միջոց է գտնում հնութեան զրոյցները իւր յիշողութեան մէջ կենդանացրնելու։

Բ. Դիւցազնական երգերի նշանակութիւնը։

Արդէն ասածից պարզ է, ինչու մեր դիւցազնական զրոյցները ըստ մեծ մասին կորցրած են իրանց վիպական բնաւորութիւնն եւ սովորական հեքեաթային ձեւ ընդունել. նոյնն է այստեղ պատմելու եղանակն, որ յատուկ է արեւելեան առասպելներին, առակներին եւ այլն սովորական „կար չկարը„ բաց է անում զրոյցի

թելը, գլխաւոր մասերի կապը թոյլ է, պատմութիւնն անկենդան եւ միանուագ, լեզուն բազմախօս։ Միայն տեղ տեղ փայլում են տեսարաններ, որոնք իրանց դրամատիկական զօրութեամբ զգացուցանել են տալիս, թէ մենք այստեղ ժողովրդի աւելի բարձր ստեղծական ոգու հետ գործ ունենք։

Բացի այս հեքեաթաձեւ վարիանտներից ժողովրդի մէջ պտրտում են եւ այնպիսիները, որոնք պահպանել են դիւցազնական վիպասանութեանց չափը եւ ձեւը, անգամ նոցանում մեզ հասել են էջէջ, որ ասողը երգում է տխուր-մելամաղձ ձայնով։ Այս թանկագին վարիանտներն աչքի են խփում իրանց գեղարուեստական մշակմամբ եւ բոլոր մասերի գեղեցիկ ներդաշնակութեամբ, որ նոցա պատուագոյն տեղն են տալիս ժողովրդի հոգեւոր արգասեաց շարքում։

Սկսւում են սոքա սովորական նախերգով, որի մէջ յիշատակւում է հերոսների մի ամբողջ աղգատոհմ՝

Դառնամ զողորմին տամ Մելքսեթ քահանին,

Դառնամ զողորմին տամ Սանասարին,

Դառնամ զողորմին տամ Բաղդասարին

Դառնամ զողորմին տամ Մհերին

Դառնամ զողորմին տամ Թրուլան Դաւթին եւ այլն. մինչեւ տոհմի վերջին հերոս փոքր Մհերը. "ողորմին„ կրկնւում է ամէն մի զրոյցի սկզբում, որ այս այն դիւցազնի գործունէութեանն է նուիրւած։

Դախերգին անմիջապէս հետեւում է զրոյցը, որ սահմանափակուած է կարճ, կարծես թէ չափաւոր նախադասութիւններով, այնպէս որ իւրաքանչիւր տողում լրանում է մի միտք. այս պատճառով պատմութիւնն ինքն ըստ ինքեան ոտանաւորի ձեւ է ընդունում, մի քանի տեղերում լսելի է անգամ չափը, որի շնորհիւ պահպանուել են աւանդութեանց լաւագոյն կտորները։ Բնաւ պատահական չեն երգերը, որոնք սոցանում հանդէս են գալիս. նոքա արտայայտում են մերթ աղօթք, մերթ խնդիր, մերթ յուսահատութիւն կամ զարմանք, միով բանիւ՝ հերոսի կամ հերոսուհու հոգեկան դրութիւնն։ Ասողը սիրով կանգ է առնում դիւցազնի զէնքերի նկարագրութեան վերայ, որ՝ ինչպէս ամէն մի ազգի վէպին յատուկ է՝ բառացի կրկնւում է ամէն մի դէպքում, առաջ է բերում ամբողջ պատմութիւններ որ եւ է անցքի մասին գործող անձանց խօսքերով, եւ աւասիկ այս կրկնութիւններում, որպէս եւ կռուի եւ մահուան հրաշագեղ տեսարաններում, պատմութիւնը բանաստեղծութեան ոգի եւ ձեւ է ընդունում։

Օրինակի համար առաջ եմ բերում երկու կտոր արձակ պատմութիւնից, որտեղ առաւելապէս աչքի է խփում վանկերի հաւասար չափը՝

Մըսրամելիք ըզձին խնծաւ (8 վանկ)
Իրի գեորդըմ էզարկ Դաւթին՝ (8 վանկ)

Գեսախ ընդ գեսախ՝ թոզ դադրաւ վերէն. (8 վանկ)
Մսրամելիք էսաց՝ խոզաձին, (8 վանկ)
Խոզ էր, խոզ դարձաւ։ (5 վանկ)
Թոզ վերցաւ, տեսաւ՝ (5 վանկ)
Դաւիթ ադտեղ նըստուկ ի.[2] (7 վանկ)

եւ կամ՝

Դաւիթ էսաց՝ խանդիւթ խաթուն, (8 վանկ)
Ցուխտ ըլնը վըր իմ խոգիւն՝ (7 վանկ)
Մընչիւ իս իմ փոխ չէնիմ՝ (7 վանկ)
Զքի աստեղէն չը տանիմ։ (7 վանկ)
Դաւիթ քուլախ[3] առից վէ, (7 վանկ)
Էսաց՝ օղորմած Աստուած (7 վանկ) եւ այլն։[4]

Ինչ կը վերաբերի վէպիս բուն էրէնին, վանկերի չափն այստեղ բազմատեսակ է. պատահում են 12 եւ 10, 10 եւ 8 կամ միանուագ 7 կամ 6 վանկեանի երգեր. օրինակի համար՝

Սարիր, քեամիմ կուզիմ, (6 վանկ)
Զիւրիր, քեամիմ կուզիմ՝ (6 վանկ)
Նա մէկ տակ սուն շուռ տէր.[5] (6 վանկ)

եւ կամ՝

Օղորմած բարերար Աստուած, (8 վանկ)
Անունք էլնին բամբակ, իս իլնըմ կրակ (10 վանկ)

---

1 Առաւտից մինչեւ միւս առաւօտ։
2 Տես իմ "Թրլոր Դաւիթ եւ Մհեր" էջ 40–41։
3 Գդակ։
4 Նոյնտեղ՝ էջ 47։
5 Նոյնտեղ՝ էջ 33։

Իս չըմ կենայ անունք իրիցըցէ. (10 վանկ)
Օղորմած բարերար Աստուած, (8 վանկ)
Անունք էլնին գեարնան մատղաշքիր, (9 վանկ)
Իս ինքըմ գեարնան անութի գէլիր՝ (10 վանկ)
Իս չըմ կենայ զանունք կճռի։[1] (8 վանկ)

Ամէն մի հերոս, ամէն մի զէնք ունեն իրանց յատուկ մականունները. Դաւիթը "Թըլլօր" (թըլլատ) է կոչուում (երեխայ ժամանակ նա այրել է իւր լեզուն), նորա հայրը "Առուծաձեւ", Մհեր, հօրեղբայրը՝ "Չէնով", Ցովանկան անգամ լոկ մականուններ՝ Փոքրիկ ճնճղիկ, ճնճղկափորիկ, Խոր Վանուկ, Խոր Գուսան եւ այլն։ Պատմի հերոսները միագումար "Ֆ---" անուամբ են մկրտուած ժողովրդի բերանով։ Դաւթի զէնքերն են՝ թուր ՝էֆ-՝էն, գուրզ ՝ա-՝ը-՝էն, շապիկ ՝ը՝էլ՝էն, թագն ի ՝ը՝էլ՝էն եւ այլն։ Այս մականուններն այն աստիճան ձուլուած են գործող անձանց եւ առարկաների անուանց հետ, որ այս կազմութեամբ անփոփոխ հանդէս են գալիս բոլոր վարիանտներում։

Գ. Տ՝ը-՝ն ՝ա-՝մ-ն ՝ը՝էց--Ֆ՝ն-ը։

Այս աւանդութեանց մեծագոյն մասը գրի է առնուած Ռուսահայաստանի սահմանագլխում ապրող գաղթականներից. այս "ասողները" ըստ մեծ մասին ծնած են արդէն օտարութեան մէջ, ուստի ծանօթ են Դաւթի եւ Մհերի զրոյցների

---

[1] Նշմանեղ՝ էջ 33. — ա կարդալ կոկորդից, գ, ք, ն փափուկ արտասանել։

հետ միայն իրանց հայրերի եւ պապերի շնորհիւ, որոնք բերած են եղել իրանց հետ հայրենիքից բանաւոր աւանդութեանց հարուստ պաշար։ Այս հանգամանքն՝ հարկաւ, զրոյցների տեղական մշակման վերայ պիտի ազդէր եւ գլխաւոր պատճառ դառնար այն արուեստական հանգոյցին, որով ժողովուրդը, թէպէտեւ անգիտակցաբար, ձգնում է կապել տարբեր դիւցազնական վէպեր միմեանց հետ. այսպէս՝ մի քանի զրոյցներում Սասունի քաջերի ազգատոհմը շարունակում են Ռուստամ, Զահրամաղ, Բուրզէ եւ այլ իրանական հերոսները, որոնց գործունէութիւնը դարձեալ սկիզբն է առնում "Սասուն քաղաքից"։ Այս տարօրինակ շփոթումը առաջ է եկել, անկասկած, երկու դիւցազնական աւանդութեանց ընդհարումից, որոնք ժողովրդի երեւակայութեան մէջ սերտ միացել են շնորհիւ հայ եւ պարսիկ հերոսների բարոյական եւ ֆիզիկական յատկութեանց նմանութեանը. Հայոց Դաւիթը անպայման կրում է Իրանի փահլեւանների կնիքը, միեւնոյն ժամանակ մնալով ժողովրդի սիրելին։

Հայ ժողովրդական դիւցազնական վէպի բովանդակութիւնը։

Ս-ն---ը է- Ա-լ-դ-լ+ (Բ-ղ---ը)։

Սենեքերիմ թագաւորը պաշարել է Երուսաղէմը. հրեշտակները կոտորում են նորա զօրքերը, եւ նա ինքն հազիւ կարողանում է

փախստեամբ փրկել իւր կեանքը, ուխտ անելով իւր ջոջ կուռքին՝ զոհ բերել իւր երկու որդիքը՝ Սանասարին եւ Ասլիմելիքին՝ եթէ ողջանդամ տուն դառնայ։ Նոցա մայրը (նա գաղտուկ քրիստոնեայ էր!), իմանալով այս բանի մասին, շտապում է իւր որդիքը հեռու երկրներ ուղարկել։ Բայց ուր որ գալիս են պանդուխտ եղբայրները, ամէն տեղ նոցա հրաժարում են հիւրընկալել, հէնց որ լսում են նոցա խրոխտ հօր անունը. յուսահատուած՝ նոքա վճռում են թագցընել իրանց ծագումը։ Պատահելով ճանապարհին սրընթաց լեռնային առուակի, որ ուժգնաբար կտրում էր մեծ գետի հոսանքը, նոքա ամրոցի հիմք են դնում նորա ական մօտ։ Վերջապէս եղբայրները ապաստան են գտնում "արեւմուտքի" թագաւորի դրանը, մնալով նորա մօտ ծառայութեան։

Մի օր թագաւորը՝ կամենալով փորձել իւր հիւրերի ընդունակութիւնը, առաջարկում է նոցա կուել իւր զօրքի հետ. Սանասարը եւ Ասլիմելիքը ջարդում են իրանց բոլոր հակառակորդներին եւ սարսափ տարածում նոյն իսկ թագաւորի վերայ, որ՝ կամենալով ազատուել վտանգաւոր օտարականներից՝ հրամայում է նոցա հեռանալ իւր երկրից։ Այն ժամանակ եղբայրները յիշում են իրանց ամրոցի մասին եւ խնդրում թագաւորից մի քանի տասնեակ ընտանիքներ ընտրած տեղում քաղաք շինելու. սա ուրախութեամբ կատարում է նոցա խնդիրը, անգամ տալիս իւր դուստրը

Սանասարին կնութեան, իսկ ամրոցն անուանում Ս-----ն։[1]

Հօր "ջոջ" կուռքը հանգիստ չէ տալիս Ասլիմելիքին՝ գիշերները այծի կերպարանքով գալիս կանգնում է նորա գլխիվերեւը եւ անդադար "մկմկում". Ասլիմելիք վճռում է տուն վերադառնալ։ Ուրախացած հայրը իսկոյն տանում է որդուն կռատուն՝ եւ հրամայում նորան երկրպագել "ջոջին", նախ քան նորան զոհելը. որդին խնդրում է հօրը ցոյց տալ իրան, թէ ինչպէս է սա կատարուում, եւ երբ թագաւորը տարածւում է երեսիվայր գետնի վերայ, Ասլիմելիք սրի հարուածով կտրում է նորա գլուխը, փշրում կուռքերը եւ նստում գահի վերայ։

Մ Ե Ծ Մ Հ Ե Ր

Սանասարին ծնաւ մի որդի՝ Մհերը։

Երբ նա դեռ 15 տարեկան էր, Սասունի շրջակայքում երեւեցաւ մի սոսկալի առիւծ, որ կտրեց ամէն մի երթեւեկութիւն։ Թանկութիւն ընկաւ։ Պատանի Մհերը դուրս է գալիս գազանի դէմ, մենամարտում նորա հետ եւ Աստուածաշնչի Սամսոնի պէս երկու կէս անում նորան, ամէն մի կէսը դնելով ճանապարհի երկու կողմը. այս պատճառով նա "Առուծաձեւ" կոչւեցաւ։[2] Այս հերոսագործութիւնից յետոյ

---

1 Որ ըստ ժողովրդի բացատրութեան նշանակում է "Սինը սան վերայ." աւելորդ է նկատել, որ սա անյաջող փորձերից մէկն է մեկնել տեղիս մթին անունը։

2 Այս նահատակութիւնը բնաւ ծանօթ չէ Մհերի

Մհեր գնում է իւր հօրեղբօր՝ Ասլիմելիքի՝ մօտ Մըսրը,[1] որտեղ մի այրի կնոջից Նորան Մսրամելիքն է ծնում, ապա այստեղից վերադառնում դարձեալ Սասուն։

Սանասար ժողովրդի խնդրանքը որդու համար հարսնացու է որոնում՝ իւր աներոջ եւ Նորա վէզիրի հետ միասին գնում է Մանազկերտ Թեւա-Թորոսի դստեր ձեռքը խնդրելու. տանը չգտնելով Նորան, հարսնախօսները շտապում են Նորա յետեւից Վան, Էրզրում եւ Ղարս, որտեղ Թեւա-Թորոս դեռ նոցա գալուստից առաջ ամրոցի հիմք է դնում. վերջապէս Նորան գտնում են դարձեալ Մանազկերտում։ Լսելով նոցա գալստեան պատճառը, Թեւա-Թորոս առանց տատանուելու տալիս է Մհերին իւր դուստրը, իբրեւ հարսնաղբէր հետը դնելով քեռի Թորոսիկին։

Մհերին ծնան երեք որդի՝ Ցուան Վէգոյ, Փոքրիկ ճնճղիկ եւ Դաւիթ։

Սանասարի մահից յետ՝ Մհեր աղքատութեան մէջ ընկաւ եւ տարաւ իւր որդիքը Մըսրը Մսրամելիքի մօտ (որ սպանելով Ասլիմելիքին՝ գրաւած էր թագաւորութիւնը). Մհեր Նորան է յանձնում տղաները, ընծայում եւս իւր Ծովասար եւ Ճապաղջուկ-Քոդէ կալւածները եւ ինքն մեռնում վշտից։

աւանդութեանց մեծամասնութեանը, որ առ. հասարակ անդրդեր դեր է խաղում մեր դիւցազնական վէպում։

[1] Այս անուամբ յայտնի են մեր ժողովրդական աւանդութիւններում Եգիպտոս եւ Նորան կից երկիրները։

Դ Ա Ի Ի Թ

Հայ դիւցազնական վէպի ամենաճոխ մասն կազմում են Դաւթի եւ նորա որդի Մհերի զրոյցներն, որ մեզ են հասել երկու գլխաւոր խմբագրութեամբ. առաջինն, որ ըստ երեւութին, բանահիւսուած է այս դիւցազների հայրենիքից հեռու, հանդէս է բերում նոցա արդէն հեքեաթային քողի տակ, անկասկած, այլազգի աւանդութեանց ազդեցութեան ներքոյ. երկրորդն՝ Խորենացի, Մովսէս Խորենացի քերթուածը, ինչպէս արդէն նկատեցինք վերեւում, բաւական դեռ թարմ է պահպանել դիւցազնական զրոյցների վիպական բնաւորութիւնն՝ իւր կենդանի պատմութեամբ, պատկերների նուրբ գծագրութեամբ եւ բովանդակութեան ամբողջութեամբ։

Կը սկսեմ երկրորդ խմբագրութիւնից։

Մհեր եւ Մսրամելիք բարեկամ են. Մսրամելիքի մահից յետ նորա այրին սիրահարական յարաբերութիւններ է սկսում Մհերի հետ. այս կապից ծնում է Մսրամելիք-որդին. Մհերը զղջում է, որ "տաճկի ճրագ վառեց, խայուն ընցուց", Մըսրիից վերադառնում է Սասուն իւր կնոջ մօտ, որից ծնում է Դաւիթը։ Զգալով մահի մերձենալը, ծերունին խնդրում է "հօրեղբօր" Զէնով Յովանին իւր եւ կնոջ մահից յետ Դաւթին յանձնել Մսրամելիքի կնոջը։ Զէնով Յովան կատարում է նորա կտակը։

Մի անգամ փոքրիկ Դաւիթը խնդրում է իւր խորթ մօրից՝ թոյլ տալ իրան Մսրամելիքի հետ միասին գնալ դաշտ, որտեղ երիտասարդ

իշխանը սովորաբար "յեղէ" (գնտակ) էր խաղում։ Մօր սոխպմամբ Մսրամելիք տանում է Դաւթին իւր հետ եւ նստացնում հեռուում, յանձնելով նորան երկու կարիճների հոգատարութեանը, բայց երեխան, ոչինչ չտեսնելով, բարկացած տուն է գալիս, իւր յետեւից քարշելով իւր պահապաններին։ Միւս անգամ չարաճճին մտնում է քարի փոսը, որ խաղի մէջ նպատակ էր ծառայում, եւ չի ուզում այնտեղից դուրս գալ. Մսրամելիք հրամայում է "յեղէն" նետել եւ սպանել նորան, բայց Դաւիթը բռնում է գնտակը, սպանում նորանով 200 մարդ եւ տուն փախչում։

Մսրամելիք վճռում է իւր խորթ եղբօրը կորուսանել, վտանգ զգալով նորանից. մայրը առաջարկում է նախ փորձել երեխայի հասունութիւնը. նորա առջեւ դնում են երկու մատուցարան՝ մէկի վերայ ոսկի, միւսի՝ կրակ է շողում. երբ Դաւիթ ցանկանում էր ձեռքը դէպի ոսկին պարզել, Աստուծոյ հրեշտակն ուղղեց նորան դէպի կրակը. այրուած մատը երեխան տարաւ բերանը՝ այրեց եւ լեզուն, որի համար "թոլոր Դաւիթ" կոչուեցաւ։ Բայց Մսրամելիք մեռում է անողորմ. այն ժամանակ մայրը խորհուրդ է տալիս որդուն, որպէս զի մեղքի մէջ չընկնել, ուղարկել որբին Զէնով Յովանի մօտ։ Մսրամելիք գաղտուկ հրամայում է Դաւթի ուղեկից երկու կարիճներին սպանել նորան Բաթմանի[1] կամրջի վերայ եւ մի կուժ լի նորա

[1] Բաթման՝ գետ է Պասուռում։

արիւնով բերել Նորան, որպէս զի «խմէ, սիրտը խովանայ». բայց այս փորձի ժամանակ հազիւ թէ իրանք կտրիճները կեանքից չզրկուեցին. իրանց փրկելու համար, նոքա երդւում են մանուկ հերոսին՝ յաւիտեան Նորան ծառայել, ինչպէս ծառայած են Նորա հօրը։ Դաւիթ Նոցա հետ միասին հասնում է հայրենական քաղաքը։

Զէնով Ցովան ուղարկում է Դաւթին ուլեր արածելու, տալով Նորան մի զոյգ պողպատէ սօլեր եւ մի պողպատէ գաւազան։ Բայց չափազանց եռանդուն պատանի հովիւը բերում հօտի հետ է խառնում զանազան տեսակ գազաններ եւ երեկոյեան բոլորին քաղաք քշում։ Սարսափած բնակիչները փակւում են իրանց տներում։ Անւանի քաղաքացիք գանգատում են Զէնով Ցովանին, որ Նորա եղբօրորդին չգիտէ զանազանել գազանները ուլերից։ Այս անգամ Դաւիթ ստանում է կովեր եւ եզներ, բայց նոյն եռանդն նա այստեղ եւս ցոյց է տալիս՝ Նորա սօլերը եւ գաւազանը մաշւել են, այնչափ նա վազած է գազանների յետեւից։ Այն ժամանակ հօրեղբայրը տալիս է Նորան նետ եւ աղեղ եւ որսի ուղարկում։

Մսրամելիք ուղարկում է Կուզբադէնին Սասուն հարկ բերելու. հարկահանը պահանջում է Զէնով Ցովանից՝

Քեռասուն անծին շիւշաք[1] կ'ուզիմ,
Քեռասուն անծին էրինջ կուզիմ,

---

1 Մաքի։

Ա 30299 II
23.012

Քեռասուն ըղտարեռ ոսկի կուզիմ,
Քեռասուն աղապ աղջիկ կուզիմ էրկանք աղան,
Քեռասուն յիրկէն կնիկ կուզիմ ուղտ բռնան։[1]

Դաւիթ այս ժամանակ որսում էր մի պառաւ կնոջ կորեկի մէջ. խմանալով նորանից կուզբաղէնի անգութ վարմունքի մասին, նա շտապում է ազատել տներում փակած կանանց, աղջկերանց եւ անասունները եւ արտաքսում տանից նոյն իսկ հարկահանին այն ժամանակ, երբ հօրեղբայրը՝ շղթած՝ նորան "կոտով" ոսկի էր չափում։

Դաւիթ դարձեալ որսի է գնում. պառաւը, տեսնելով իւր կորեկի փճանալը, յանդիմանում է Դաւթին եւ ցոյց տալիս նորա հայրական որսատեղի վերայ։ Հետեւեալ առաւօտ Դաւիթ իւր հօրեղբօր հետ գնում է այնտեղ "Նէճիրի". Նկատելով, որ որսատեղը պարապած է, նա հրամայում է դուրս թողնել գազաններին, ասելով՝ "որ կարիճ է՝ ուր խամար թող բռնի։" Դիշերը Զէնով Յովան Դաւթի փէշը գնում է իւր տակը, որպէս զի քնի ժամանակ անհանգիստ երեխան չգնայ մի փորձանքի հանդիպի։ Դաւթի քունը չի տանում. նկատելով մնտակայ լեռան վերայ լոյս, նա կտրում է դանակով իւր փէշը, բարձրանում լեռան գագաթը, գծում լուսավառ քարի շուրջը եւ վե-

---

[1] Տես իմ "Թբլոր Դաւիթ եւ Մհեր" էջ 13։

բաղառնում իւր տեղը։ Երթնելով քնից՝ հօրեղբայրը պատմում է նորան, որ այս լեռան վերայ մի ժամանակ նորա հայր Մհերը շինած էր "Մարութայ բանձր Աստուածին„ վանքն,[1] որ ապա Մսրամելիք աւերեց։ Դաւիթ վերականգնում է վանքն եւ գնում նորա մէջ "40 նորընծայ երէց, 40 վարդապետ, 40 էպիսկոպոս, 40 աւագ սարկաւագ, 40 սարկաւագ„ եւ նոցա պահապան՝ Յարատայ Քեամին եւ Բաթմանայ Թիւղին։„

Մսրամելիք, իմանալով սորա մասին, կրկին ուղարկում է Կուզբադէնին Սասուն, որ աւերում է վանքն եւ սպանում ամբողջ միաբանութիւնն. մահից պրծնում է միայն մի սարկաւագ, որ այս գոյժը բերում է Դաւթին. հերոսը, դնելով ուսին արմատահան արած ծառը, հասնում է թշնամիների յետեւից եւ բոլորին կոտորում, իսկ Կուզբադէնին՝ քարշելով նորա ատամներն եւ շարելով ճակտին՝ արձակում գուժկան Մսրամելիքի մօտ։ Վանքն նորից շինւում է։

Մսրամելիք զօրք է գումարում եւ արշաւում Սասունի վերայ. զօրքը գալիս բանակում է Լիւռայ դաշտում։

Դաւիթ լսում է այս նոր վտանգի մասին նոյն պառաւից, որ՝ կամենալով փրկել իւր կորեկը՝ յիշեցընում է նորան նորա հօր գէնքերի եւ Քուռկիկ ջալալի մասին. պատանի գիւցազնը

---

[1] Այս վանքն այժմ էլ կարելի է տեսնել Սասունում։

կուի է պատրաստում եւ պահանջում հօրեղբօրից՝

Քենէ կուզիմ իմ խօր Քուռկիկ Ջալալին,
Քենէ կուզիմ իմ խօր թուր կէծակին,
Քենէ կուզիմ իմ խօր խաչ պատրազին վարաջ թեւին,
Քենէ կուզիմ իմ խօր ոսկի գիւտին,[1]
Քենէ կուզիմ իմ խօր կապէն խաբիւկին,
Քենէ կուզիմ իմ խօր ոսկի քեամար,
Կը տաս խաթրեով, չխօ՝ կէնիմ զօրեով։[2]

Զէնով Ցովան ակամայ տալիս է Նորան պահանջած զէնքերն, իսկ խաչ պատրազին՝ Դաւթի աղօթքի զօրութեամբ՝ ինքն թռչում նստում է Նորա աջ թեւի վերայ. բայց հօր պատերազմական զրահներն չափազանց մեծ են փոքրիկ Դաւթի համար՝ ոսկի քեամար 40 փաթ փաթաթեց, ապա Նոր կոճկեց, ոսկի գիւտին "40 լիտր բամբակով" լցրեց, Նոր նստաւ գլխին։

Հետեւելով հօրեղբօր խորհրդին, Դաւիթ կուից առաջ քնում է իւր հօր "կաթնաղբիւրի" մօտ, խմելով Նորա ջրից. հետեւեալ առաւօտ նա տեսնում է իրան լցուած եւ հսկայական հասակ ստացած. այժմ զրահներն հազիւ վերան են գալիս։

Կամենալով փորձել թուր կէծակի զօրութիւնը, հերոսը մի հարուածով կէս է անում ճանապարհին պատահած պողպատէ սիւնը. ապա վստահ գնում թշնամու դէմ։

---

1 Պազուարտ։
2 "Նղնաեղ" էջ 26։

Մսրամելիք Դաւթի համար դարան է պատրաստել՝ խոր փոս է փորել եւ վերեւից թաղիսով ծածկել։ Սասունցի դիւցազնը գտնում է իւր հակառակորդին "եօթ օրւայ քնով քնած„. Դաւիթ արթնացնում է նորան, հրաւառ գութնի խուփը դնելով ոտերի տակ. Մսրամելիքի եւ մոր խնդրանքը նա իջնում է իւր ջալալից հանգստանալու եւ ընկնում դարանի մէջ։

Զէնով Ցոլան վատ երազ է տեսնում, իբրեւ թէ Մըսրի աստղը վառ փայլում է, իսկ Սասունինը՝ հաղիւ պսպղում։ Հասկանալով, որ Դաւիթ վտանգի մէջ է, նա նստում է իւր արագաթռիչ նժոյգի վերայ, մի ակնթարթում հասնում կուի դաշտն եւ իւր ուժգին ձայնով յիշեցնում Դաւթին խաչ պատրազի սքանչելի զօրութեան մասին. Դաւիթ աղօթքով գիմում է իւր հօր վանքին եւ խաչին[1] եւ իսկոյն դուրս գալիս լոյս աշխարհ։ Ապա տեղի է ունենում երկու ախոյեանների հռչակաւոր կռիւը. Մսրամելիք երեք անգամ հարւածում է Դաւթին, բայց ամէն անգամ միայն փոշի է բարձրացնում նորանից։ Հերթը Դաւթինն է. Մսրամելիք մնում է "40 գեաղ„ փոսի մէջ, վերան դարսել տալիս "40 ջաղցի քար, 40 գոմշի կաշի„. մայրը առաջ է գալիս եւ խնդրում հերոսից՝

---

1 Հացն ու գինին, տէր կենդանին,
Մարութայ բանձրիկ Ասուարածին,
Խաչ պատրազին ընչ վար աջ թեւին
Հերոսի սովորական աղօթքն է նեղ բոպէներում։

իրան բաշխել որդու կեանքը. Դաւիթ ընծայում է նորան երկու հաւատ, իսկ երրորդով կտրում "40 ջաղցի քարը, 40 գոմշի կաշին" եւ իրան Մսրամելիքին երկու կէս անում։

Ըստ Էրէրէտ խմբագրութեան՝ Հերոսի խնամատարը Քեռի Թորոսն է հանդիսանում։ Ցիշելով Մհերի որբերի՝ Զէնով Յովանի, Ցուան Վէգոյի եւ Դաւթի (այլ վարիանտներում եւս՝ փոքրիկ ճնճղկի, Խոր Մանուկի, Խոր Գուսանի) մասին, որոնց հայրը թողած էր Մըսրում, Քեռի Թորոսը շտապում է նոցա այնտեղից Սասուն բերել։ Մսրամելիքը համաձայնում է միայն այն պայմանով նոցա արձակել, եթէ նոքա նախապէս նորա սրի տակից անցնեն։ Մեծ եղբայրները անցնում են, Դաւիթը յամառում է. միայն իւր Քեռու յորդորանաց զիջանելով՝ նա թռնում է սրի վերայից, ոտը քարին է առնում, քարից կայծ է ցայտում։ Սոսկաց Մսրամելիք, վտանգ զգալով նորանից։

Ցուան Վէգոն նստում է թագաւոր Սասունում, իսկ Դաւթին ուղարկում են հոտեր արածելու։ Ճրօտում նա եղբայրանում է Հաբեւան գիւղի հովիւի հետ. մի անգամ, իմանալով նորանից, որ նոցա գիւղում այդ օրը պատարագ կայ, Դաւիթը շտապում է եկեղեցու գաւիթը եւ չսպասելով պատարագի արձակման, անց է կացնում իւր գաւազանը "մատաղի" կախոսաներից մէկի կանթը եւ բերում իւր եղբօրը։ Սա արտասուքն աչքերին պատմում է Դաւթին, որ նորա բացակայութեան ժամանակ

եկան 40 աւազակներ եւ հօտից 40 կով տարան։ Հերոսը առնում է իւր գաւազանը, հետամուտ լինում նոցա եւ ծածկում մի այրի մէջ։ Սարսափը տիրեց աւազակներին, երբ նորա դիւցազնական գոչը լսեցին, եւ սկսեցին մի առ մի դուրս գալ իրանց թագստեան տեղից. սպաններով նոցա, Դաւիթ մնում է այրի մէջ, որտեղ գտնում է կուտակուած զանազան տեսակ գանձեր. բայց ամենից առաւել նորան տիրելի է Քուռկիկ ջալալին. մի կողմում նստ է գալիս կաթսան կովերի կաշիների մէջը։ Դաւիթ վերադարձնում է կաշիները իւր ընկերոջ համագիւղացիներին եւ սպառնում նոցա "Դաւթի աւերածով", եթէ նոքա իւր եղբօր ոռճկի գէթ մի փոքր մասն անգամ կտրեն. ապա իւր քեռու օգնութեամբ նա տուն է բերում գանձերը, իսկ իրան իբրեւ ընծայ ստանում Քուռկիկ ջալալին։

Հետեւեալում երկու խմբագրութիւնները նման են։

Աւանդութեան շարունակութիւնն է Դաւթի պատկը Խանդութ խաթունի հետ։ Հերոսը նշանուած է Զմեշկիկ Սուլթանի հետ, բայց հրապուրուած Խանդութի գեղեցկութեամբ, որ գոմում են կապուտկոզի արքայադստերից ուղարկուած աշուղները,[1] նա վճռում է ամենայն

---

1 Իկին գեղ իկին Երկու կազուզան,
Խանդիւթի խաթուն Դաւթի խատաբ գեռվացին՝
Ընու բաւժ բալէն* կ'խարցիս՝
Քեռառուն կանդիւնը, մկնել յաւիլ ը։

---

* Հատակ։

գնով նորա ձեռքը ստանալ։ Ճանապարհին նա պատահում է մի մանձկալի,[1] որ քշում էր իւր գութանը երկու գոմէշով լծած. Դաւիթ արձակում է անասունները, իւր մէջքն է փաթաթում գութանի շղթան եւ եօթ "փաթ" վարում։ Զարմացած մանձկալը նկատում է, որ "հունարը" ձիանն է. հերոսը իջնում է ձիուց եւ եօթը փաթ եւս վարում։ Գիւղից ճաշ են բերում, եւ մանձկալը հրաւիրում է անծանօթ փահլեւանին միասին ճաշել. Դաւիթ մաքրում է բոլոր ամանները եւ սարսափ տարածում իւր սեղանակիցների վերայ. "Հայ տղէք, փախէք, էսի մեզի էլ կուտայ" գոչում է մանձկալը։ Կամենալով փորձել իւր բախտը, թէ արդեօք ստանալու է խանդութի ձեռքը, դիւցազն մի սրի հարուածով կէս է անում գութանը։ Վարձատրելով մանձկալին նորա վնասի համար, նա շարունակում է իւր ճանապարհը։

Եօթ փահլեւաններ արդէն երեք տարի է խանդութի խաթունի արքունիքում սպասում են իրանց ընտրութեանը. հազիւ խանդութ նկատում է Դաւթին պատուհանից, իսկոյն նետում

Ընու ճակատ լենուա կ'խարցիս՝
Եօթ կանգիւն ը. ոկն էլ յաւել ը.
Ընու ընքաւիր կ'խարցիս՝
Կալամով ին քէշած.
Ընու աչքիր կ'խարցիս՝
Ջինու կրիխէն ը.
Ընու սրտակութիւն կ'խարցիս՝
Քանց գէզած բ՚ամրկի քիւլէն սրտակ ը՝

(Թ. Դաւիթ էջ 44—45։)

1 Գութան վարող։

է Նորան ոսկէ խնձորը։ Փեսաները խօսք են առնում միմեանց հետ արբեցընել իրանց բախտաւոր հակառակորդին եւ սպանել Նորան։ Խնջոյք են պատրաստում եւ թագցընում իրանց սրերը սեղանի ծածկոցի տակ։ Հերոսը իմանում է նոցա չար դիտաւորութեան մասին դռնապան Գորգիզից, որին իրան քաւոր է նշանակում. մտնելով խնջոյքի սենեակը, նա միանգամից դատարկում է գինով լի կաթսան եւ կոտրատում դաւադիրների սրերը. փեսաները դուրս են փախչում, մի մի ապտակ իջեցնելով քաւոր Գորգիզին։ Բայց թանգ արժեցաւ Նորան իւր հարսից մի աւելորդ համբոյր քաղելու փորձը՝ դիւցազնուհին բռնցքի հարուածով արիւնում է Նորա երեսը. Դաւիթ բարկացած խնդրում է Աստծուց դէպք տալ Նորան իւր անպատուութեան վրէժը առնելու։ Արթնելով հետեւեալ առաւօտ՝ նա տեսնում է խանդութի քաղաքը Նորա հօր թշնամիներով պատած. իրրեւ փեսայ, կուի նա պէտք է գնայ։ Արդէն երեք օր է, որ Դաւիթ չկայ. խանդութ, չհամբերելով, աղամարդի զգեստ է հագնում, զինավառւում եւ գնում Դաւթի դիակը որոնելու. պատահելով Նորան ճանապարհին, արքայադուստրը Նորան չի ճանաչում եւ կուի բռնւում. Հերոսը Նորան երիվարից գետին է գլորում, ջոքում կրծքի վերայ եւ պատրաստ է արդէն մահացու հարուածը իջեցընել, երբ մի զոյգ "սիւտակ ծրծերը" դուրս են պրծնում, եւ Դաւիթ ճանաչում է իւր հարսին։

Դաւիթ կնոջը տանում է Սասուն. Զմեշկիկ Սուլթանը (ճանապարհը նորա երկրի միջով էր անցնում), տեսնելով նորան պատուհանից, կշտամբում է նորան դաւաճանութեան համար եւ մենամարտութեան հրաւիրում. Դաւիթ ընդունում է հրաւէրը եւ երդւում իւր խաչ-պատրազով վերադառնալ եօթ օրից յետոյ։

Բայց անցնում են եօթը տարի, եւ երդման մասին մոռացւում է։

ՓՈՔՐ ՄՀԵՐ

Դաւթին եղաւ մի որդի՝ Մհերը։

Նորա մանկութիւնը Նոյնպիսի դիւցազնական կատակներով է զարդարուած, ինչպէս Զոհրաբինը պարսից, Վասիլիյ Բուսլայեւինը՝ ռուսաց վէպերում. ում ականջից է քարշում՝ ականջն է հանում, թեւից է քարշում՝ թեւը պոկում։ Սասունի մեծամեծները գանգատում են Դաւթին, որ նորա որդին քաղաքի բոլոր մատաղ սերունդը բնաջինջ է արել. բայց ինքն հայրն եւս արդէն անզօր է հանդիսանում իւր որդու կատակներին վերջ դնելու. Մհերը կռիւ է բռնում հօր հետ եւ միայն Գաբրիէլ հրեշտակը՝ իջնելով երկնից՝ բաժանում է երկուսին. Դաւիթ անիծում է որդուն եւ խնդրում Աստծուց նորան սերունդ չտալ. նեղացած Մհերը հեռանում է խլաթ։

Դաւիթ նկատում է, որ իւր խաչը աջ թեւի վերայ սեւացել է, իսկոյն յիշում իւր երդման մասին եւ վճռում գնալ Զմեշկիկ Սուլ-

թանի մոտ։ Կուից առաջ նա լողանում է իւր հակառակորդի պարտիզի շատրւանի մէջ։ Զմեշկիկ դաւաճանաբար հարւածում է նորան պատուհանից հրավառ "գուլթնի խոփով" եւ սպանում։ Խանդութ խաթուն՝ լսելով Դաւթի մահը՝ մեռնում է վշտից։

Զէնով Յովան Յուան, Վէգոյ, ահ կրելով Զմեշկիկի վրէժից, վճռում են կոչել Մհերին Խլաթից. Յովան փաթաթւում է 7 փաթ գոմշի կաշով, որպէս զի "չտրաքի" եւ իւր դիւցազնական գոչով իմացընում եղբօրորդուն նորա հօր մահւան մասին. Մհեր, նորա ձայնը առնելով, շտապում է Սասուն եւ աւերում Զմեշկիկի քաղաքները։ Զէնով Յովան որդեգրում է Մհերին[1]։

Աստուածաշնչի աւանդութիւնն Յովսէփ գեղեցկի եւ Պենաեփրիոյ կնոջ մասին կրկնւում է եւ այստեղ շնչին տարբերութեամբ. արտաքսւած տանից Մհերը հօր գերեզմանի վերայ գանգատում է իւր վիճակից՝

---

1 Ըստ այլ աւանդութեան՝ Մհեր ծնում է գեռ խանդութի հօր տանը, որտեղ նա մեծանում է։ Երբ խանդութ, Դաւթի մահը լսելով, նեստում է իրան աշտարակի բարձրութիւնից, Դաւթի եղբայրները հաւաքւում են նորա շուրջը եւ տեսնում, որ նորա ծծերից կաթ է հոսում. վճռում են գնալ խանդութի ծնողների մոտ եւ պահանջել Դաւթի սերունդը։ Մեծ մայրը փակում է Մհերին 7 դռների յետեւը եւ յայտնում Սասունի հերոսներին նորա մահւան մասին։ Զէնով Յովան, չհաւատալով նորան, գործադրում է իւր ահաւոր ձայնը. Մհեր ջարդում է դռները եւ դուրս գալիս իւր հօրեղբարց մոտ։

Տա՛յ խէրիկ, ինչ էնիմ
Տա՛յ խէրիկ, ինչ էնիմ
Սասմայ քեռաղքէն բեհրար խանած։[1]

Գերեզմանից լսում է Դաւթի ձայնը, որ ցոյց է տալիս Նորան Հալաբ քաղաքի վերայ։ Ճանապարհին հերոսը պատահում է մի սոսկալի պառաւ կնոջ, որ հաց էր թխում. վախելով թէ մի գուցէ պառաւը Նորան ուտէ, Մհեր պինդ բռնում է Նորա ծծերից. պառաւը աղաչում է Նորան արձակել եւ խոստանում Նորան իւր դըստեր՝ գեղեցիկ Գոհար խաթունի ձեռը։ Հերոսը պսակւում է Գոհարի հետ։

Հալաբի թագաւորը լսում է, որ իւր նշանածին մի անծանօթ կտրիճ է տիրել, եւ մարդ է ուղարկում Սասուն օգնութեան կոչելու այնտեղի փահլեւաններից Մէկին։ Զէնով Ցովան ուղարկում է իւր որդուն՝ Պարոն Ատղիկին, տալով Նորան Դաւթի զէնքերը։ Մհեր իւր ազգականի "արեան հոտը" առնում է եւ հրամայում կնոջը փակել բոլոր պատուհաններն եւ դռները, մինչդեռ նա կուելիս կը լինի։ Ցանկարծ սենեակը վառւում է անսովոր լուսով. Գոհար, չհամբերելով՝ բաց է անում պատուհանը եւ տեսնում՝

. . . Մէկմ ձին թեւաւուր խեծի,
Վար Մհերկէ գլխին կէթայ կուգեայ,
Թուր կ'շարժի վար մատալին,

---

1 Արտաքուստ։

Բիւր բիւր կրակ թրից կը լցուի վար մատալին,
Մատալից շուռ կառնի գետին,
Կէթայ յանդիւնդք։[1]

Գրքի մէջ գոհար կարդում է, որ այս հերոսը Մհերի հօրեղբայրն է, եւ բարձրաձայն ողջունում նորան. կնոջ ձայնն առնելով, Մհեր բարկութիւնից նետահար է անում Աստղիկին, որ աւանդում է հոգին "ըստ Սատունցոց սովորութեան„ նորա ծնկների վերայ։ Հերոսը ուշաթափ է լինում. թշնամիք կապում են նորան երկաթէ շղթաներով եւ նետում մի հորի մէջ։ Մհեր դուրս է գալիս այստեղից մի պառաւի շնորհիւ եւ որդեգրւում մի քահանայից։ Մինչ այս մինչ այն Հալաբի թագաւորը դեռ շարունակում է պաշարել Գոհարի ամրոցը, որ պաշտպանում է այս դիւցազնուհին։ Մհերին տանում են զինուոր. պատահելով Գոհարին կռւի մէջ, նա անցնում է նորա կողմը, կոտորում թագաւորի զօրքերը եւ նստում նորա գահի վերայ։

Մի այլ վարիանտ հետեւեալ կերպով է նկարագրում Մհերի կռիւը թեւաւոր Աստղիկի հետ. Մհեր իւր հօր վրէժն է առնում, աւերելով Զմեշկիկի քաղաքները. նոցանից մէկում նա գտնում է միայն մի ծերունու՝ Փիրմուսին՝ նորա դստեր՝ Դեղձոնի հետ. հերոսը տալիս է Դեղձոնին իրան ուղեկցող հօրեղբօրը՝ Խոր Մանուկին, իսկ ինքն պսակւում է մի թագաւորի դստեր հետ։ Կինը (Գոհար խաթունը) աստղա-

---

1 Նոյն տեղ էջ 66։

գէտ էր. մի օր նա յայտնում է ամուսնուն այն մեծ վտանգի մասին, որ սպառնում է նորա ցեղակիցներից մէկին։ Դիւցազնը կնոջ հետ գնում է ծերունի Փիրմուսի մօտ. առաւօտեան գալիս է Աստղիկ Երզնկացին եւ կռիւ բռնում Մհերի հետ, հարուածելով նորան վերեւից. Գոհար՝ տեսնելով իւր ամուսնունեղած, բաց է անում իւր "սիւտակ ծծերը" եւ խոստանում Աստղիկին նոցանում հանգիստ տալ նորան, եթէ նա խնայէ դեռ անփորձ Մհերին. Աստղիկ մի ակնթարթ կանգ է առնում, հրապուրած նորա գեղեցկութեամբ, բայց յանկարծ մահացի հարուած գլխով՝ անշունչ գետին է տարածւում։ Մհերի հարցին, թէ արդեօք ինչ է Աստղիկի ոխի պատճառը, ծերունին պատասխանում է, որ Դեղձոն Աստղիկի նշանածն էր։

Վերջապէս մի երրորդ վարիանտ նկարագրում է այս ասոնեղամարտն աւելի եւս մանրամասնօրէն։ Խոր Վանուկ առեւանգում է Դեղձոնին, Աստղիկի նշանածին, եւ թաղցնում նորան մի այրի մէջ։ "Աստղը ճակատին" հերոսը հետամուտ է լինում նորան մինչեւ Մհերի բնակատեղը, որտեղ սա յոյս ունի իրան պատսպարան գտնել։ Մհեր բարձրանում է տան կտուրը եւ այնտեղից մենամարտում Աստղիկի հետ, բայց գուրզի ծանր հարուածից ուշաթափ վայր է ընկնում. մահից ազատում է նորան դարձեալ կինը, իւր ժամանակին բաց անելով իւր "սիւտակ ծծերը"։ Մհեր՝ բարկացած կնոջ անպարկեշտութեան վերայ, երդւում է եօթը տարի նո-

բանից հեռու մնալ եւ՝ հրեղէն ձին հեծած՝ հա-
լածում է Աստղիկին օդի միջով երկրի շուրջ
կողմը. աղատութեան ոչ մի հնար չտեսնելով
Աստղիկ ուղղում է իւր ճանապարհը դարձեալ
դէպի Գոհարի բնակարանը, նորանից բարե-
խոսութիւն սպասելով. բայց տան շէմքի առջեւ
նորան հասնում է Մհերը եւ սպանում. աստղը
դիւցազնի ճակատից թռչում է։

Անցնում են շատ տարիներ, եւ Գոհար
մեռնում է։ Մհեր իւր ձին նստած որսում է,
բայց "ծերացած" հողը նորան արդէն չի կարող
պահել։ Նորա խնդրանքը Աստուած բաց է ա-
նում Վանայ քարը, որ եւ իրան մէջն է առնում
դիւցազնին իւր երիվարի հետ։

Այս հռչակաւոր քարի մասին աւանդու-
թիւնն մինչեւ այժմ կենդանի է ժողովրդի մէջ.
նա այսօր էլ հաւատում է, որ տարին մի ան-
գամ Համբարձման գիշերը բացւում է քարը եւ
բանտարկուած հերոսը կրկին տեսնում է աշխարհ։

Հայ դիւցազնական վէպի պատմական սերմն։

Արդէն նիւթն ինքն ըստ ինքեան ցոյց է
տալիս, թէ ինչ պէսպէս տարրերից են բաղկա-
ցած նորա մասերը. հայ աւանդութեան ծիլը՝
աճելով՝ խառնուել փաթաթուել է զանազան ազ-
գերի առասպելաց բողբոջներին. այստեղ պարզ
լսելի է եւ Աստուածաշնչի պատմութեանց եւ
պարսից դիւցազնական վէպի եւ խորհրդաւոր

Արեւելքի հրապուրիչ հեքեաթների արձագանգն։ Այսպիսի բնաւորութիւն են կրում առհասարակ ամէն մի ազգի բանաւոր աւանդութիւնները. նա հակուած է միշտ իւր յիշողութեան մէջ միացնել այն երեւոյթները, որ դրդած են նորա երեւակայութիւնն, կապ որոնել նոցա մէջ, դրոշմել նոցա վերայ իւր ազգային ոգու կնիքը։

Հոմերոսի վէպերը, ամբողջապէս վեր առած, հազիւ թէ մի ազգի ստեղծական շնորհին կարելի լինէր վերագրել. նոցանում մերթ այստեղ, մերթ այնտեղ մեր ականջին են դիպչում ալեւոր Արեւելքի առասպելները, որ երբեք խզած չէր իւր կուլտուրական կապն իւր հարազատ որդւոց հեռաւոր գաղթականութեանց հետ. միայն հելլէն ազգին էր վիճակուած՝ այս թափառական զրոյցներն գեղարուեստօրէն մշակել եւ նոցանից մի գեղեցիկ ամբողջութիւն կազմել։

Պատմութիւնը շփել է Հայերին մի շարք ազգերի հետ, որոնցից ոմանք իրանց դարաւոր հարեւանութեան հետքերը խորը դրոշմել են նոցա հոգեւոր կեանքի վերայ։ Պարսից քաղաքական իշխանութիւն, որ տարածւում էր ամբողջ Փոքր Ասիոյ վերայ եւ հասնում մինչեւ կովկասեան ձիւնապատ լեռնաշղթան, անպտուղ չպէտք է մնար Հայ ժողովրդի մտաւոր զարգացման համար, եւ իրօք՝ այս օտար ազդեցութիւնն աչքի է զարկում ոչ միայն մեր լեզուում, այլ եւ այն բազմաթիւ աւանդութիւններում, որոնք

անմիջապէս կրում են Իրանի վիպական զրոյցների կնիքը։

Միւս կողմից Բաբելացւոց լայնածաւալ աշխարհայեցողութիւնը, նոցա հռչակաւոր «աստեղագիտութեամբ» հանգերձ, ազգէ ազգ, ցեղէ ցեղ անցնելով, պէտք է գրաւէին ամբողջ հին աշխարհի երեւակայութիւնն։ Քրիստոնէական եկեղեցւոյ թափած բոլոր ճիգը՝ խորտակել հեթանոս չաստուծոց, երկնային լուսատուների պաշտամունքն՝ ապարդիւն մնաց նորա դարաւոր կուռում իւր հզօր հակառակորդի հետ. ժողովուրդը անգամ մկրտելուց յետոյ դեռ շարունակում էր հաւատալ եւ այժմ էլ հաւատում է աստղերի բնազդող զօրութեանն, որոնք բաց են անում նորան ապագայի գաղտնիքները, չար օրը, չար տարին յայտնում եւ ուղեկցում նորան մինչեւ գերեզման։ Բեւեռագիր արձանագրութիւններն, որ գտնւած են Հայաստանի սահմաններում (Թ. դարից սկսած Ն. Ք.) եզրակացնել են տալիս, որ Բաբելոնի կուլտուրան դեռ նախապատմական ժամանակները հաստատւել էր Փոքր Ասիայում, որտեղից նորան լայն ճանապարհ էր բացւում դէպ ի Արեւմուտք։

Վերջապէս Աստուածաշնչի պատմութիւններն, որ այնչափ տարածւած են Արեւելքում, պէտք է հարուստ պաշար մատակարարէին հայ ժողովրդի հետաքրքրութեանն. նոցա հասարակ ոճը, մատչելի եւ հետաքրքիր բովանդակութիւնն՝ խորը բարոյական իմաստի հետ միացած՝ բնականապէս պէտք է հրապուրէին այն

ազգերի համակրանքն, որոնց մէջ նոքա տարած-
ւում էին, դառնալով այնուհետեւ նոցա հո-
գեւոր կեանքի գլխաւոր գործոններից մէկը. հա-
զարաւոր տարիներ, նոյն իսկ դոր կատակարան
անգոր է հանդիսացած քակտել Հնի այն զօրեղ
հեղինակութիւնն, որ դարերէ ի վեր կրթել է
մարդկային ազնուագոյն ցեղերը։

Մանաւանդ առատ են Ս. Գրոց տուած
պատգներն հայ հոգի վերայ. հաղիւ քրիստո-
նէութիւնն ոտ դրեց Հայաստան, ինչպէս հայ
հոգեւորականութիւնը՝ ժողովրդի կրթութեան
գլուխն անցած՝ սկսեց եռանդուն կերպով տա-
րածել նոր սերմն երկրի ցիր-ցան մասերում.
քրիստոնէութիւնը դարձաւ այնուհետեւ ազ-
գային միութեան եւ բարգաւաճման հիմնաքարը,
զարկ տուեց մայրենի լեզուի եւ պատմագրութեան
զարգացմանը, բաց արեց հայ մանկանց առջեւ
արեւմտեան գիտութեան գանձարանը։ Հին
կատակարանը, շնորհիւ իւր միստիական բնաւորու-
թեան, պէտք է առանձնապէս սիրելի ընդունե-
լութիւն գտնէր հայ ժողովրդի մէջ, որ հնուց ի
վեր ունէր իւր գիւցազնական աշխարհը. սատր
հերոսները, սակաւ առ սակաւ բնաւորանալով
նորան, պէտք է ի վերջոյ մտնէին նորա ազգային
անմահների տաճարը։ Նեմատրերու է, որ Աստ-
ուածաշունչը գեռ աւելի վաղ ծանօթ էր Հայե-
րին՝ շնորհիւ գերի բերուած Հրէաների, որոնց
Հայոց թագաւորները բնակեցնում էին երկրի
զանազան մասերում։[1]

---

[1] Մ. Խորենացի Գիրք Բ. գլ. ԺԹ.։ Ս. Գրոց մի

Սանասար եւ Բաղդասար։ Բնական է որ Հայ ժողովուրդը դարերի ընթացքում Ս. Գրոց Սանասարին (= Շարեզեր) Հայ դիցացն է մկրտել, նորանից սերելով Սասուն գաւառի անունը։ Բաւական է երկու աւանդութեանց ամենախիստ համեմատութիւնն անգամ, որպէս զի տեսնել նոցա անկասկած նմանութիւնը. թագաւորաց գրքում կարդում ենք՝

"Եւ ի հասանել գիշերոյն եկ հրեշտակ Տեառն, եւ եհար ի բանակէն ասորեստանեայց հարիւր եւ ութսուն եւ հինգ հազար. եւ կանխեցին ընդ առաւօտն, եւ ահա ամենայն մարմինք մեռեալ։ Եւ չուեաց գնաց, եւ դարձաւ Սենեքերիմ արքայ ասորեստանեայց՝ եւ բնակեցաւ ի Նինուէ" (Թագք. Զորրորդ. գլ. ժթ. 35, 36)։[1]

Հայ աւանդութիւնն անհամեմատելի է իւր օրինակի հետ միայն հայրապետների Ռ-ի եւ սպանութեան ֆամիլիայի նկատմամբ. Հին կտակարանն ապա շարունակում է՝

"Եւ եղեւ մինչդեռ երկիր պագանէր (Սենեքերիմ) ի տան Նեսրոքայ աստուծոյ իւրում՝, Ադրամելէք եւ Սարասար որդիք նորա հարին զնա սրով, եւ ինքեանք գերծան յերկիրն

քանի աւանդութիւնները, ինչպէս օր. Ադամի եւ Եւայի, Ջրհեղեղի եւ այլն. որոնց հետքերն այժմ պարզապէս գտնում ենք Բաբելական բեւեռագրերում, թերեւս խորը հնութիւնում ասրածւած էին Փորր Ասիայում։

1 Գիրք Սաստուածաշունչք հին եւ նոր կտակարանաց։ Ի Վենետիկ. 1860։

Ընթերցասէր։[1] մինչդեռ հայ զրոյցն հոր սպանումն (եւ այն եւս [illegible]) վերագրում է նորա երկու որդւոց միայն [illegible], որ զանազան անուններ է կրում՝ Ասլիմելիք, Ընամելիք, Բաղդասար եւ այլն, այսպիսով աւանդութիւնս աւելի մերձենում է Պոլիհիստորի պատմութեանն, ըստ որում Ասորեստանի տէրը ընկնում է միայն մէկի՝ մի ոմն Ադրումազանի ձեռից. նոյն անունն պահպանել է եւ Մ. Խորենացին «Ադրամազան, պէսպէսութեամբ, որ նոյն գլխում եւս «Ադրամել» է կոչւում։[2] Հոր անբնական խողխողումն որդուց՝ ժողովուրդը ճգնում է արդարացնել հայրասպանի քրիստոնէական ոգեւորութեամբ, որի շնորհիւ վերանում է երկրից կռապաշտութիւնն։

Ոչ մի ներքին կապ չունենալով մեր ժողովրդական վէպի հետ, որ պատմական սերմից է աճել, այս զրոյցն պէտք է այն արեւելեան հանգոյցների շարքը դասել, որոնցով ժողովուրդը անգիտակցաբար երբեմն կապում է իւր ազգային աւանդութեանց թելը, հրապուրելով անուանց արտաքին նմանութեամբ։ Սակայն զրոյցս նորանով է հետաքրքրական, որ նորանում՝ ըստ

---

1 Նոյն տեղ 37։ Հմմտ. եւս Ցովհիթ՝ Ը. 24 ... Եւ ոչ անցին աւուրք — [illegible] Սամ. 1. 21. յիսուն՝ մինչեւ սպանին զնա (գԱՍ. — [illegible] ներքերիմ) երկրին որդիքն իւր, եւ — [illegible] փախեան նոքա ի լերինս Հայոց։ — [illegible]

2 Մ. Խոր. Գ. Ը. գլ. ԻԳ. Բաբելական ժամանակագիրը նմանապէս միայն մի թագաւորապան է ճանաչում, նշանակելով այս անցքը 681 թ. 20 Ցերեւ (Ֆ. ամիս)։

օրինակի հռոմէական աւանդութեան՝ երկու հարազատ եղբայրներ քաղաքի հիմնադիրք են հանդիսանում. առ հասարակ երկու եղբարց արկածները հնուն կազմում էին թափառական աւանդութեանց նիւթ. բաւական է յիշել Ռոմուլոս եւ Ռեմոս, յունաց Գարմոդիոս եւ Արիստոգէտոն, Ագամեմնոն եւ Մենելաոս, Աստուածաշնչի Կայէն եւ Աբէլ, գերմանացւոց Բալդուր եւ Հիւդր (Hödhr) եւ այլն. սովորաբար երկու եղբայրներից մէկը շուտով իւր վախճանն է գտնում. (Աբէլ, Ռեմոս, Գարմոդիոս, Ագամեմնոն։) Հիւդր կոյր է հանդիսանում. ըստ յունաց աւանդութեան՝ Կաստոր եւ Պոլիդեւքէս, Դիոսի որդիքը (Dioskuren) փոփոխաբար ապրում էին՝ մէկը երկրիս վերայ արեւի լուսով, միւսը՝ գետնաշխարհի (դժոխքի) մթութեան մէջ (Ոդիսեւս 11, 303). նոցա գլխաւոր տօնը կատարւում էր ամառային արեւադարձին։ Այս առասպելների սկզբնական հայրենիքը հաւանական է Բաբելոնում որոնել, որտեղից է ծագած արեւի եւ լուսնի (Շամաշ եւ Սին) պաշտամունքն։ Կուլտուրայի դեռ ստորին աստիճանի վերայ կանգնած ազգերի երեւակայութիւնն պէտք է հանապազ ազդէին երկրիս այս երկու լուսատուները, որոնցից մէկը անփոփոխ է իւր մշտնջենաւոր շարժման մէջ, իսկ միւսը՝ տարւայ որոշ ժամանակները նւազում, կորնչում է եւ դարձեալ փայլում երկնակամարում։

Մեծ Մհերի մասին մեր աւանդութիւնները շատ քիչ են հաղորդում, ըստ մեծ մասին

նորա անունն անգամ չէ յիշւում. նորա խղճալի վախճանն աղքատութեան մէջ միանգամայն անհամապատասխան է ժողովրդական հերոսների բնաւորութեանն։ Առիւծի կէս անելն այստեղ մեզ մոտ յիշեցնում է Աստուածաշնչի Սամսոնի շահատակութիւնը. վերջինս եւս պատկանում է հնուց դիւցազների այն բազմութեանն, որոնք՝ լինելով անբնական ոյժով օժտուած՝ յաղթում են զանազան հրէշների. Ռուստեմ պարսից վէպում սպանում է Սպիտակ Դեւին, հայոց Վահագն, գերմանացւոց Սիգֆրիտը եւ ռուսաց Դոբրինեայ կռւում են վիշապների հետ, Հերակղէս՝ առիւծի հետ, Իղդուբար (Դիմրոդ) ասուրական առասպելում յաղթում է թեւաւոր հրէշին։ Այս ալեւոր հնութեան պատկանող աւանդութիւններն, որ սկզբում բարի եւ չար ոյժերի կռիւն էին արտայատում, ժամանակի ընթացքում հեշտիւ կարող էին ժողովրդի սիրելիների վերայ անցնել։ Այսպիսով եւ այս միջադէպը միանգամայն օտար սերմ է մեր բուն դիւցազնական աւանդութեանց շարքում։

Դաւթի աւանդութեանց ծագումը. հերոսի բուն հայրենիքն, անձնաւորութիւնն եւ անունն. նորա բարոյական տիպարը։

Հայ դիւցազնական վէպը իսկապէս հանդէս է գալիս Դաւիթ Սասունցու աւանդութիւններում, որոնցում տպաւորւել է հայ ժո-

ղովրդի պատմական վիճակն Արաբացւոց արշաւանքի ժամանակ, խորը դրոշմել այն դարաւոր ազգային կռիւը, որ ի վերջոյ ի գահ բարձրացրեց Բագրատունեաց հարստութիւնն (885 թ.)։ Այս անցքերը, որ ժողովրդի աչքում քրիստոնէութեան անհաւատների վերայ տարած յաղթանակն էին նշանակում, պէտք է անջնջելի ապրէին նորա յիշողութեան մէջ, շարժէին նորա երեւակայութիւնն, գործունէութեան հրաւիրէին նորա ստեղծական ոգին։ Թէ կռւի առանձին միջադէպերը եւ թէ ինքեանք գործող անձինք հարկաւ կարող էին ժամանակի ընթացքում խառնուել, շփոթուել միմեանց հետ, բայց այն պատմական ծիլը, որից ծաղկել է հայ դիւցազնական վէպը, միանգամայն պարզ պահպանել է նորանում իւր բնաւորութիւնն եւ բարձր նշանակութիւնն։

Արաբացիք Հայաստան մտան 638 թ., գրեթէ ոչ մի խոչնդոտի չհանդիպելով այնտեղ։ Արշակունեաց հարստութեան անկումից յետոյ (428) Հայաստանը ծառայութեան էր մտած մասամբ Յունաց, մասամբ Պարսից, թէպէտ եւ երկիրը որոշ չափով պահպանած էր իւր անկախութիւնը նախարարների իշխանութեան տակ։ Նորեկները գտան երկիրը աւելի եւս թուլացած իշխանների փոխադարձ թշնամութեամբ եւ երկպառակութեամբ. արդէն 640 թ. Արաբացիք հասնում են մինչեւ Արարատեան գաւառը, աւերում Դուին քաղաքը եւ 35.000 բնակիչ գերի տանում Դամասկոս։ Միակ օգնութիւնն,

որի վերայ Հայերը յոյս ունէին, Բիւզանդիոն էր, բայց սա ինքն հաղիւ կարողանում էր իւր սահմանները մահմետականաց հրոսակների դէմ պաշտպանել. Հերակլ կայսրը արդէն ստիպուած եղաւ հրաժարուել Պաղեստինից, կոչելով այնտեղից յունական զօրքերը. ապա ինքն մայրաքաղաքը պաշարեցաւ 668 թ. եւ կրկին աւելի եւս սաստիկ 717 թ.: Ռուաւելութիւնը յայտնապէս իսլամի կողմն էր, որի յաղթող սրի տակ կարճ միջոցում իւր գլուխը խոնարհեց ամբողջ գոռոզ Արեւելքը:

Նոր կրօնը պահանջում էր իրան տարածել սրով եւ հրով. այստեղ լիովին ցոյց տուեց իրան արեւելեան բարբարոսների իշխանութիւնը յաղթուածների վերայ. մեր միջնադարեան պատմագրերի տեղեկութիւններն լի են սոսկալի հալածանաց նկարագրութիւններով, որ յարուցանում էին երկրում ամիրապետի հաւատարիմ ծառաները. սոքա իրանց բոլոր ճիգը թափում էին նորա վերայ, որ տեղական իշխաններին մէկ մէկ որսալ կարողանան եւ արդէն իրանց պետի դրանը մերթ խոստումներով եւ մերթ սպառնալիքով ստիպեն նոցա ընդունել իսլամ: Զիանայեցաւ նոյն իսկ հոգեւորականութիւնն, որ՝ հակառակ աշխարհական իշխանաց՝ մարտիրոսական մահը գերադասում էր ոգու ամօթալի ստրկութեանն. եկեղեցիները իրանց զարդարանքից մերկացան, խաչերը գմբէթներից վերցնել տուին, սուրբ անօթները վաճառուեցին. քահանաներին հրամայուած էր մօրուքները գերծել եւ ի նշան

սարկութեան կապարեայ կնիքներ կրել պարանոցի վերայ։

Արաբացոց ոստիկանների միւս հոգսը նորանումն էր, որ ըստ հնարաւորութեան հարուստ հարկ ուղարկեն իրանց պետերին նոցա ողորմած ուշադրութեանն արժանանալու համար. քայքայուած երկիրը շատ անգամ անկարող էր լինում տանել այս ծանր բեռը, եւ մերթ այստեղ, մերթ այնտեղ ծագում էին ապստամբութիւններ, որ արեան հեղեղատով էին ճնշւում։

Այս անհաւասար կռիւը մանաւանդ սուր կերպարանք ստացաւ Վասպուրականում եւ Տուրուբերանում, որտեղ Թ. դարում տեղական իշխաններն արիաբար շարունակում էին իրանց իրաւունքները պաշտպանել երկրի անառիկ տեղերում։ 848 թ. այստեղ է գալիս Ջաֆար ալ-Մուտավակկիլ (Ամստուած յուսացող 847—861) ամիրապետի անունից մի ոմն Ապուսէթ զօրքի մեծ բազմութեամբ հարկ առնելու պատրուակով, բայց յայտնապէս դիտաւորութիւն ունենալով այստեղ հաստատել իւր իշխանութիւնն։ Ստանալով իւր հարկն եւ տեսնելով Աշոտ Երծրունու եւ Բագրատ Բագրատունու իշխանաց բարեկամութիւնն, Ապուսէթ չվստահացաւ բացարձակ գործել, այլ վերադարձաւ Բաղդադ, յանձնելով իւր իշխանութիւնը Մուսէին (850 թ.). սորանից դեռ առաջ նորա հրամանով Ալայ (կամ Ովայ) հաղարապետը մտաւ Վասպուրական եւ սկսեց աւերել երկիրը. ի զուր Վասպուրականի տէր Աշոտ Երծրունին

յորդորում էր նորան առնել իւր հարկը եւ հեռանալ երկրից. տեսնելով Ալայի յամառութիւնը, նա յարձակուեցաւ վերան եւ կոտորեց նորա զօրքը. ազատուեցաւ միայն առաջնորդը քչերով։ Հետեւեալ ընդհարումն Արաբացոց հետ տեղի ունեցաւ Աղձնիքում (այս գաւառին էր պատկանում Սասունը). Մուսէն յանկարծակի մտնում է Տարօն, Բագրատ Բագրատունու երկիրը, մտածելով վերջնական հարուած հասցնել անհնազանդ բնակիչներին. Աշոտ, ստանալով այս նոր գոյժը Բագարատից, շտապում է նորան օգնութեան, եւ միացած հայ զօրքերը չարաչար սրի են մատնում թշնամու գունդը։ Արաբացիք մի առ ժամանակ արտաքսուեցին երկրից, բայց Թուլասիրտ իշխաններից ոմանք, երկնչելով խալիֆի վրէժից, շտապեցին բոլոր մեղաւորութիւնն Աշոտի վերայ բառնալ. նոցանից մէկը, Վասակ Արծրունին, երկիւղ կրելով իւր գանձերի համար, որ իւր տան գետնափորում էր թագցրած, անձամբ եկաւ Ջաֆարի մօտ եւ ուրացութեամբ փրկեց իւր կեանքը եւ գոյքը[1]։ Զայրացած խալիֆը նոր զօրք ուղարկեց Իւսուֆի (Ապուսէթի որդու) առաջնորդութեամբ, հրամայելով նորան բռնել Աշոտին եւ կապանքների մէջ բերել նորան իւր մօտ։ Իւսուֆ, ըստ օրինակի իւր նախորդաց, սկսեց ապատակել երկիրը. բայց տեսնելով, որ իշխանները դուրս չեն գալիս իրանց ամրոցներից, դի-

---

1 Թովմաս Արծրունի. Դպր. Երկ. Գլ. Զ. էջ 113։

մեց խորամանկութեան, բարեկամական դիմակի տակ հրաւիրելով իւր մօտ Բաղրատ Բագրատունուն՝ նորան իւր իշխանութիւնն յանձնելու պատրուակով. ամենեւին կասկած չտանելով դարանի մասին՝ Ցարօնի իշխանը շտապեց Խլաթ, որտեղ Իւսուֆ Նորան ձերբակալեց եւ երկաթեայ կապանքների մէջ ուղարկեց Բաղդադ, իսկ ինքն միւս պատանդների հետ գնաց Մուշ ձմերելու։ Այն ժամանակ Խութի լեռնականք, տեսնելով, որ իրանց իշխանը գերուած է, գարնան սկզբին վայր իջան իրանց լեռներից Ցոմնանի առաջնորդութեամբ, շրջապատեցին քաղաքը եւ կոտորեցին այնտեղ նստած արաբական հրոսակները. Իւսուֆ փախչում պահւում է Փրկչի եկեղեցու գմբէթի մէջ, բայց Նորան գտնում են այնտեղ եւ աշտէով շամփուրում. "Եւ ես աչք իմովք տեսի զայրն զայն, որ հարեալն էր զնա, եւ ի նմանէ ստուգեցի վասն Նորա", աւելացնում է մեր պատմագիրը[1]։

Այսպիսի յանդուգն դատաստանն իւր ծառայի հետ հարկաւ չէր կարող ներել ուղղափառաց պետը, եւ հաղիւ Նորա ականջին հասաւ Արաբացոց լեռնականներից պարտութեան լուրը, ինչպէս նա հրամայեց զօրք գումարել իւր ընդարձակ տէրութեան բոլոր մասերից եւ այս ահաւոր բազմութեան հեղեղատը ուղղեց Հայաստանի վերայ (853 թ.). զօրքի հրամանատար նշանակուեցաւ Ջաֆարի ամենամօտ սիրելին՝ Ղարայ

---

1 Նղնաեղ. Գլ. Է. էջ 120։

Բուղայ - էս - Շարապի, որին է պարտական Հայաստանը իւր պատմութեան ամենաարիւնալի էջերով։ Կարճ միջոցում բոլոր Հայ գաւառները հեղեղուեցան արաբական հրոսակներից, որոնք հասան մինչեւ Տփղիս եւ առան քաղաքը առանց կռիւ։ Աշոտ Արծրունին, վտանգի մօտենալը տեսնելով, ամենալաւը համարեց փակուել իւր դղեակ ամրոցում, բայց, դաւաճանուած իշխաններից, ինքնակամ անձնատուր եղաւ Բուղային։ Արաբական զօրապետը ուղարկեց գերի Հայ իշխաններին Ջաֆարին, որ հրամայեց նոցա բանտ դնել։ Աշոտին հետեւեց նորա եղբայրը՝ քաջարի Գուրգէնը, որին միայն գաւով կարողացաւ բռնել թշնամին։ Ընդհանուր վիճակից ազատ մնաց միայն Բագրատ Բագրատունին, առ երեսս ընդունելով իսլամ, եւ Վասակ Արծրունին, որ դեռ սորանից առաջ ուրացած էր իւր հայրերի հաւատը։ Մարտիրոսական պակը շյապաղեց զարդարել քաջաց քաջի՝ լեռնական Յովհաննի գլուխը, որ շարաշար մահուամբ խալիֆի դրանը անմահացրեց իւր անունը ժողովրդի մէջ։

Այս ընդհանուր սուգի ժամանակ հանդէս եկաւ մի նոր անձնաւորութիւն, որ կրկին բարձրացրեց ժողովրդի վհատած ոգին եւ սարսափ տարածեց Արաբացոց վերայ. դա Գուրգէնն էր, Ապուսելճ Արծրունու որդին։ Մի շարք փայլուն յաղթութիւններով նա մաքրեց երկիրը թշնամուց եւ այնպիսի հռչակ ստացաւ, որ ըստ մեր պատմագրի ինքն Բուղան ուղարկեց նորան ի պարգեւ՝ նորա քաջութեան համար՝

«Սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ եւ գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուրք (մարակ) խիզախողք եւ երիվար բարձրաւիզ, ոտնատորոմի խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմական։ Եւ կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ...։[1]»

Հերոսի բարձր համբաւը գերեց Անձաւացեաց տիկնոջ Հեղինէի սիրտը, որը իւր ամուսնու մահից յետոյ, ըստ օրինակի ժողովրդական վէպի հերոսուհու, յայտնում է իւր սէրը քաջին. «Եթէ հաճոյ թուիցին քեզ կնութեան եւ կամիցիս քեզ զտիրեալն Անձաւացեաց, գրում է նա նորան, մի վեհերեալ յապաղելով դանտաղկոտ լինիր եւ վերջանար զփութաղն։»[2] Պուրգէն շտապեց տիկնոջ կոչին եւ տիրեց նորա երկրին։ Ամբողջ Վասպուրականը մի առ ժամանակ մնում է նորա ձեռքի տակ մինչեւ Հայ իշխանաց վերադարձը գերութիւնից (862թ.)։ Երկիրը վերջապէս խաղաղացաւ երկար յուզմունքներից յետոյ, երբ 885ին Անիում թագաւոր օծուեցաւ իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, որին ինքն Ահմեդ ալ – Մուտամիդ խալիֆը (870—892) պարգեւեց արքայական թագ եւ հանդերձ։

Ահաւասիկ այն պատմական հողը, որի վերայ են աճել Դաւթի աւանդութիւնները։ Խառն ի խուռն անցքերը, որ կատաղի փոթորկի նման Հայոց երկրի վերայով անցան, պէտք է

---

[1] Ղազարեան դպր. Գ. գլ. ԺԳ., էջ 198։

[2] Ղազարեան գլ. ԺԵ., էջ 209։

ամիսք սիրտիդի լիշումքեան մէջ վառ մնան։ Երբեմն եւ ինչ գար անուշ գոյութ միանգամայն ապաստան էր։ Այսինքն՝ ոչ միայն բաղդաւորեան։ այլ եւ գրեանքեան։ եւ այս վանականութեան մասնաւորապէս լիշատակ է իւր անուան։ ապրած սիրտի լիշատակութեան։ Եւգոս վերայ գրեալ է իւր բանաւոր գուբերնատորին «բաղ պատրաստի» գրուածքեան։ որ միշտ գրած է աբ բեռի վերայ։ «անվանատեղի»։ ասելով։ Ա։ Ամանակաւոր վանքը եւ նոցոյն է մի բանի անգամ։ Սասունի գիւղ։ ապանց բանակին վանականանալու է վանքատրի էջեանց խումբը։ որոց ասին բան անգամ բերեալ էին գարձեան արարածեան վրանակերը։ Ա էրգիս մի բանի վերանորոգեալ էր մեզ լայնի պատմեան անհանգստութիւնս։ Եկաւ Ամանդէ։ Ասան Ա էրգիս։ որ բերաւոր անձերու վրանակը։ Գրանցում է փանդէ բաղդի գանդը։ եւ Իսկն փարեալ ասան մէջ պաշտում (որի վանդը եւ սանդի է իւր մանկանեան)։ վանատրաց Ասան Ամերիկու։ Ֆասարեանց սիրեալն է։ որ վարքու ասելի պէտք է լեռնի մոլորվի մէջ։ Եկան մի պատմեալ բան բերանքում է իւր գարձանքը։ գեղի այս գատանան բանեալ։ ։։։։ եւ գի մի հրեշտակ։ որ ինչ վառ ասա (Ասանդէ) ապիրատ եւ Իսկանում եւ անդիրէ եւ անիրէ ասանդ պատանանդ մեր բարեբերեան ասա գի անանդիանեանդ։ ի բաղ գեղանդ գասի մեզ լեռնանդերանդարանդ։։։։»[1]

[1] Գր. Ա. էջ 18։

Հանգամանք սրան լինեցի ականատես, որ բնորոշվեց էր ուրիշ արարածներ Հրամանը եւ գոյությունը Հայոց մարդկանց մասնավոր ամենայն կարիքի դրամը, պետք է մոգության սիրելին գտնեմ[1]։ Եղան լիշատակներ գիրքեր եւ վեպեր նշեալ ազգերի անձնատուրքեան մասին պարիզ, որ բան գրագիրներում արդեալ է իր "հեղինակի" գաղափարն գանգիր թշնամու եւ մոգությունքը գանգիր է եղան արիւնակից բերեալ գրքերը Հերոսի Հետ։ Դա բան բնական է։ Սատանի քարոզը գայթում էին մի ազգաբնակ։ Բայց բնչպէս դեռ էր անհանգիստ, պատճառ այն եւս Հիմք գտաց էր լեռնի ազգանքրքեան Հանար։ Սատանի Հերոսներից սոնդ գոյն բաղքում էին իրանց մեղանչանց ասէ պատմական անձերը, որոնք բան իրանց բարեպաշտ եւ մարմնական լայնքրքեանց մոգությունը այլ այլ անուններով էին միրաստ։ "Դուռ" մեղանչեն, որ գրում է այս ամիրայ սերունդն, բնորոշում է ոչ միայն երկրի պատերազմական իրանները, այլ սատանի եւ բնակիչների, որ միշտ մեր սրերը պատվանդ էին իրանց լայնան բնաւորությունն եւ ապա, գարձեալ ոչին, միայնակ լայնքանգում արարածին անգի Հետ։

Բայց նոցանից ոչ մեկում այն սարսափան չէ ապատուրդ մանանգան եւ մոգության ոգին,

[1] "Ես բեկ տեսանող է բաներ ասելու ասման սեռեն։ ամ այն է։ որ միայ հանեն բանում է սեղանն մանանգը հարա է ջան։ հնոց բեղեր հարա բանից մի բեռն եւ։ գարանեն մեռանեն գանգը է միայ հրաց արարանի։" Ղ։ Ա։ Ա։ էջ 100։

ինչպէս Դաւթի անձնաւորութեան մէջ. նա երկիւղած է, մեծահոգի, անշահասէր, արդար, նեղեալների պաշտպան՝ յատկութիւններ, որ ժողովրդի աչքում ամենաբարձր գնահատութիւն ունեն։ Նորա վերայ է կենդրոնացած վէպիս բոլոր գործողութիւնն, նա է սկսում եւ վերջացնում "անհաւատ" Մսրամելիքի հետ կռիւը։ Աշոտ Երիցունու նման նա էլ՝ անգամ արտաքսում է երկրից հարկահան կուզբադինին (որ հաւանօրէն ծաղրանուն է կ-ղ = սապատող եւ արաբ. بادين բադին = դ-ր-ր բառերից կազմուած) եւ սպանում նորա մարդկանց։ Մսրամելիքի մահը, որ ընկնում է հերոսի ձեռքից, պէտք է ժողովրդին յիշեցնէին այն ուրախալի օրը, երբ անգութ խուսափը շամփրեցաւ խութի լեռնականներից։

Նմանապէս Դաւթի վերայ կարող էին անցնել Գուրգէն Երիցունու մի քանի շահատակութիւնները, որ իրօք արժանի նիւթ էին մատակարարում ժողովրդական վէպի համար։ Երկու հերոսների կենաց մի քանի մանրամասնութիւնները մեզ հիմք են տալիս նոցա անձնաւորութիւններն ձուլելու.

ա. Դաւիթի ինչ ինչ աւանդութիւններում "պլեճկերի տղայ" է կոչւում, որ նմանութիւն է բերում Գուրգէնի հօր "Ապու-պեղճ" անուան։[1]

բ. Գուրգէնի ամուսնութիւնն Անձաւացնաց տիկնոջ հետ իւր սիրահարական մանրա-

---

1 Գուրգէն որդի Ապուպեղճի Վասպուրական իշխանի, գլ. ԺԳ. էջ 194։

մանութեամբ՝ մեզ յիշեցնում Դաւթի եւ Խանդութ խաթունի պատկը։

գ. Արաբական զօրապետից Գուրգէնին պարգեւած զէնքերը բառացի համապատասխանում են Դաւթի հայրական «թուր կէծակին, ոսկի քեամարին եւ քուռկիկ ջալադին։»

Գուրգէն Արծրունու հերոսագործութիւնները գուցէ դեռ նորա կենաց ժամանակ կազմում էին ժողովրդական երգերի նիւթ, որոնց մէջ է պտրելու Դաւթի աւանդութեանց սկզբնական սերմը։ Բնականաբար Գուրգէն-Դաւթի վերայ ժամանակի ընթացքում կարող էին եւ Աշոտ Արծրունու, անգամ խութեցի Յովհանի շահատակութիւններն կուտակուել. այս տեսակէտից Դաւթի անձնաւորութիւնն [illegible] պէտք է համարել, որի մէջ է մարմնացել սրբազան կռւի գաղափարը յանուն հոգեւոր եւ մարմնաւոր ազատութեան։

Այսպիսի մի հռչակաւոր հերոս, որ հարբատահարուածների պաշտպան է հանդիսանում եւ սրի մի հարուածով գետին տապալում հսկայ Մսրամելիքին, ժողովրդին իսկապէս [illegible] պէտք է թւար, որ սպանում է սոսկալի գողիաթին։ Համեմատութիւնն շատ հրապուրիչ էր, եւ այս անունն ժողովուրդը ընդ միշտ իւր սիրելի դիւցազնին է յատկացրել։ Բայց նա միեւնոյն ժամանակ լաւ յիշում էր, որ Աստուածաշնչի Դաւիթը, նախ քան թագաւոր օծուելն, իւր հօր հօտն էր արածում եւ զանազան գազանների հետ մենամարտում.

"Եւ Դաւիթ գնացեալ (ընդ եղբարս իւր) դարձաւ ի Սաւուղայ արածել զոչխարս հօր իւրոյ ի Բեթղահեմ..."

"Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Արածէր ծառայ քո զխաշինս հօր իւրոյ, եւ յորժամ գայր առիւծ կամ արջ եւ առնոյր ոչխար ի հօտէ անտի, ելանէի զհետ նորա եւ հարկանէի զնա, կորզէի ի բերանոյ նորա. եւ եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփողից նորա եւ հարկանէի եւ սպանանէի զնա։"[1]

Այս միջադէպը հայ ժողովուրդը վերին աստիճանի հետաքրքիր կերպով է մշակել. արդարացնելու համար "ծուռ" անունն, որ նա իւր հերոսին է տալիս, նա ստիպում է երիտասարդ հովիւին բերել հօտի հետ խառնել առիւծներ, արջեր եւ այլ գազաններ, որոնք հնազանդ են նորա գաւազանին։ Դմանապէս գեւերի եւ աւազակների հետ կռիւը նոյն աղբիւրին է վերագրելու։

Ըստ երեւութին, նոյն հողի վերայ է հաստատել Դաւթի եւ Զէնով Ցոլանի ազգակցութիւնն. Հին կտակարանի տեղեկութիւնն արքայորդի Յ-Ը-Ռ-Ի սիրոյ մասին առ Դաւիթ ("Եւ ոգի Յոնաթանու կապեցաւ ընդ ոգւոյն Դաւթի, եւ սիրեաց զնա Յոնաթան ըստ անձին իւրում" Թագ. Ա. գլ. ԺԸ. 1) եւ վերջինիս ազգականանալն նորա հետ արդէն բաւական հիմք են տուել ժողովրդին մեր վէպի երկու հերոսին եւս միմեանց արիւնակից ճանաչելու։

---

1 Թագ. Ա. գլ. ԺԷ. 15, 34, 35։

Բայց մեր ժողովրդական Յովանն "ձէնով„ է կոչւում. առասպելական մթին մեկնութիւններն հաղիւ թէ իրաւամբ այստեղ իրանց տեղ գտնել կարողանային. այս տարօրինակ յատկութիւնն բնական է վերագրել լեռնականաց, որոնք յաճախ ստիպւած են լինում հեռաւոր տարածութեան վերայ միմեանց հետ խօսելու եւ որոնց ձայնին բոմբիւնն "իբրեւ ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերէ„ . . .[1]: Զարմանքներն անխուսափելի են, երբ պատմական զրոյցն՝ զարգանալով՝ հեղհետէ վիպական բնաւորութիւն է ստանում:

Հերոսի մենամարտն իւր նշանաւոր հետ ծանօթ նիւթ է եւ ռուսաց ժողովրդական վէպին: Դունայ (Դանուբ) գիւղացին գնում է Լիտաւացոց թագաւորի մօտ՝ նորա գստեր ձեռքը իշխան Վլադիմիրի համար ուզելու: Ստանալով հօր համաձայնութիւն, նա հարսի հետ վերադառնում է Կիյեւ. ճանապարհին նոցա յետեւից է հասնում մի անծանօթ կտրիճ, որի հետ Դունայ կռիւ է բռնւում եւ ձիուց գետին գլորում. արդէն նա պատրաստ է մահացու հարւածն իջեցնել, երբ յանկարծ դուրս են ցատկում զգեստի տակից մի զոյգ "սպիտակ ծրծեր„, եւ հերոսը իսկոյն ճանաչում է հարսի քրոջն, որի հետ նա պսակւում է: — Գերմանական վէպի դիւցազնուհին, արքայադուստր Բրիւնհիլտան, որի սէրն է գրաւում Սիգֆրիդ՝ անցնելով հրաւառ պատնէշից, նմանապէս պատկանում է այս

[1] Տե՛ս մեր "Յառաջաբան„:

կտրիճ կանացի տիպարին, որ յաճախ հանդէս է գալիս արեւելեան զրոյցներում։

Այստեղ հետաքրքրագոյնն այն է, որ Յունաց Յովհաննէս Զմշկիկ կայսրն (969—976) իբրեւ կինարմատ է հանդէս գալիս, շարունակելով կրել իւր "սուլթան" տիտղոսն։ Թէ կայսեր անունն ժողովրդականութիւն էր վայելում Արեւելքում՝ վերագրելու է թէ նորա ծննդատեղին (Հայաստանում) եւ թէ նորա արաբական արշաւանքին, որ փառաւոր յաղթութեամբ պսակուեցաւ. ըստ վկայութեան Մատթէոս Ուռհայեցու՝ Զմշկիկ անցնում է Տարօնի միջով եւ իջեւանում Մուշ քաղաքում, որտեղ "սիրոյ ուխտ" հաստատելով Հայերի հետ՝ Աշոտ Թագաւորից օգութիւն է ստանում[1]։ Բայց Զմշկիկ մեր ժողովրդական վէպում դաւթի "նշանածն" է կոչւում, որին հերոսը դաւաճանում է. այս տարօրինակ կերպարանափոխութիւնն հիմնուած պէտք է լինի այն աւանդութեան վերայ, որ կայսեր մասին պտըտում էր Արեւելքում. ըստ նոյն պատմագրի՝ Զմշկիկ գալիս պաշարում է Ամիդ (Տիգրանակերտ) քաղաքը. "իսկ տէրն Ամիդայ քաղաքին կին էր, որ էր քոյր Համանոյ ամիրային Տաճկաց։ Եւ յառաջ ժամանակաց Թագաւորն խառնակեալ էր ընդ նմա մեղաք, եւ վասն այնորիկ չարար հնարս առնելոյ զքաղաքն Ամիդ . . . եւ թողեալ զԱմիդ վասն կնոջն իւր. եւ վասն զի Զմշկիկ ի գաւառէն

---

1 Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ. Երուսաղէմ, 1869, էջ 21։

խոշնայ էր, ի տեղւոյն, որ այժմ կոչի Զմշկա-
ծագք, եւ կինն ի նմին սահմանացն էր»։[1] Իւր
հերոսի մահն հիմնաւորելու համար, որ ընկնում
է իւր դաւաճանութեան համար Զմեշկիկ Սուլ-
թանի ձեռքից, ժողովուրդն անգիտակցաբար
փոխադրել է վերոյիշեալ աւանդութիւնն Դաւ-
թի վերայ, կայսեր անունն տալով նորա սիրու-
հուն։

Գութնավարի հետ միջադէպը տեղի ունի
եւ ուսաց դիւցազնական վէպում. միայն այս-
տեղ հերոսն ինքն գութնի տէրն է հանդիսա-
նում։ Ոչ իշխան Վլադան եւ ոչ նորա կարիճ-
ները չեն կարող գութանն հողից հանել. իսկ
նորա տէրն մի ձեռքով է վերցնում նորան եւ
դնում ճանապարհի մի կողմը։ Կինկինատին
հռովմէական պատգամաւորները գտնում են գու-
թանն անձամբ քարշելիս, երբ գալիս են նորա
մօտ՝ թշնամեաց դէմ նորան առաջնորդ ընտ-
րելու։

Իրանի հերոսների մասին աւանդութիւն-
ները դեռ հնում պէտք է ծանօթ լինէին Հայե-
րին. այս հանգամանքի վերայ գոնէ մատնացոյց
է անում Խորենացու մի նկատողութիւնն, որով
նա երիտասարդ իշխան Սահակ Բագրատունուն
է դիմում. «եթէ կամիս, ստեմ եւ ես յաղագս
նորա (Տորքի)՝ անյաջ եւ փցուն, որպէս Պար-
սիկք վասն Ռոստոմայ Սագճրկի՝ հարեւր եւ
քսան փղոց ոյժ ասեն ունել»։[2] Պարսից հերոս-

1 Նոյնտեղ, էջ 22—23։
2 Խորենացի Գիրք Բ. գլ. Ը։

ներից ոմանք, ինչպէս Ռուստամ, պէտք է հրապարակին հայ ժողովրդի համակրանքն ոչ միայն իրանց մարմնական, այլ եւ բարոյական յատկութեանց շնորհիւ, պատրաստի օրինակ ծառայելով նորա նորագոյն սերունդների համար։ Հայ դիւցազնի վերայ անտարակոյս անցել են հռչակաւոր պարսից հերոսի մի քանի սովորութիւններն. նոքա երկուսն եւս

ա. շատակեր են,

բ. սիրում են որսորդութիւն,

գ. թշնամուն կէս են անում,

դ. ծառն արմատից հանում եւ այլն.

Ռուստամի կենաց մի քանի միջադէպերը ժողովուրդն ուղղակի իւր վէպն է փոխադրել.

ա. Դաւիթ, Ռուստամի պէս, կուռ է բռնում իւր որդու հետ։

բ. Երկու հերոսն էլ ընկնում են թշնամուց պատրաստած հորի մէջ. Ռուստամ այստեղ իւր վախճանն է գտնում[1], մինչդեռ Դաւիթ իւր «խաչ Պատրաղի» զօրութեամբ կրկին դուրս գալիս լոյս աշխարհ։

Վերջապէս, երկու դիւցազն էլ ունեն իրանց իմաստուն նժոյգներն (Ռախշ, Ջալալ), որոնք յաճախ զգուշացնում են իրանց տէրերին թշնամու դարանից։

Բայց ի նկատի առնելով իրանական վէպի լայն հռչակն, հեշտու կարելի է չափազանցութեան մէջ մոլորել։ Արշաւի էլ զսրեղ լինի աղ-

---

1 Տես իմ "Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ"։

գերի փոխադարձ կուլտուրական ազդեցութիւնն, վերջինս, յայտնի պայմաններում, որոշ սահմաններից չէ անցնում. ամէն մի ազգ ունի իւր աշխարհայեցողութիւնն, իւր մտածելու եղանակն, իւր ստեղծող ոգին։ Վերոյիշեալ պարսից ազդեցութիւնն ընդհանրապէս զգալի է միայն արտաքին մանրամասնութիւններում եւ կամ պատահական միջադէպերում, որ դարերէ ի վեր կուտակուել են մեզանում։ Չպէտք է մոռանալ, որ

ա. Հայ գիւցազնական վէպն ըստ իւր էականութեան դ-գ-ֆ-ն հողի վերայ է աճել եւ զարգացել.

բ. Պատմի քաջարի կռիւն եկեղ թշնամիների հետ կազմում է այս աւանդութեանց գլխաւոր հանգոյցն եւ ամբողջացրնում նոցա.

գ. Վերջապէս, վէպիս գլխաւոր հերոսն՝ Դաւիթ Պատմնցին՝ միանգամայն տարբեր յատկութիւններով է հանդէս գալիս. նորա յամառ, "ծուռ" բնաւորութիւնն, բարեպաշտութիւնն, անձնուէր, կարիճ ոգին պատկանում են այն ժողովրդական շրջանին, որի մէջ է ծնել նորա գիւցազնական տիպարն. նա երեւակայութեան արդիւնք չէ եւ ոչ էլ առասպելական հերոս, այլ ֆ-ֆ-ն, կենդանի պատկեր, որ գիւցազանց շարքն է մտած։ Նորա ամբողջ անձնաւորութիւնն այն աստիճան ձուլել է ժողովրդի հետ, որ ամենայն իրաւամբ նորան է պատկանում հայ ազգային հերոսի համբաւն։

Մեռելի առասպելն։

Շատ աղքատ են մեր տեղեկութիւններն Հայոց հնագոյն առասպելաբանութեան մասին. ոչ միայն ժամանակն, այլ եւ եկեղեցու նախանձախնդիր պաշտօնեայք աշխատել են բնաջինջ առնել ժողովրդի մէջ հեթանոսութեան այս մնացորդն։ Օրինակն մեր աչքի առջեւ է. մեր բարեպաշտ պատմագիրն չէ թագցընում իւր առելութիւնն դէպի հեթանոս «փծուն եւ անճոռնի» աւանդութիւններն, այլ միայն իւր երիտասարդ մեկենասի կամքն կատարելով, ակամայ յիշում է Թիւրապ Աժդահակի առասպելն. «զորոց ատեմք զբանս եւ զգործս, եւ այնոցիկ մանաւանդ թէ լսելիս մեր տաղտկացուցանէր, այսօր ձեռամբ իմով շարադրեմ զայնոսիկ»,[1] ասում է Խորենացին, իբրեւ մի ծանր լուծ վերան առնելով։ Սակայն ինքն ժողովուրդն հեռու էր այս տեսակէտից եւ ախորժելով ականջ էր դնում իւր գուսանաց երգերին։ Մ. Խորենացու յիշած զրոյցներն ըստ մեծ մասին հատուկտոր են, անկապ եւ շատ անգամ միմեանցմէ քողարկուած։ Դոցանից եւ ոչ մէկում չենք գտնում մեր դիւցազնի անունն. սակայն պահպանուել է մի աւանդութիւն, որ մեզ համար մեծ հետաքրքրութիւն է ներկայացընում։ Արտաշէսի մահից յետոյ, որ ժողովրդից շատ սիրուած էր, թագաւորում է նորա որդի Ար-

---

[1] Մ. Խորենացի՝ «ի պարսից առասպելաց.» Ա. գրքի վերջում։

տաւաղդը. այս առթիւ Գողթան գաւառի երգիչք դեռ խորենացու ժամանակ հետեւեալն էին աւանդում. "Ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. գժուարի, ասեն, Արտաւազդ՝ ասելով ցՀայրն. Մինչ դու գնացեր, եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակաց որպէս թագաւորեմ։ Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այսպէս. եթէ դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Մասիս, անդ կացցես, եւ զոյս մի՛ տեսցես։"

Հօր անէծքն ճշգութեամբ կատարւում է. մեր պատմագիրն ապա շարունակում է.

"Զբուցեն զսմանէ եւ պատաւունք, եթէ արգելեալ կայ (Արտաւազդ) յայրի միում՝ կապեալ երկաթի շղթայիւք. եւ երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն, ջանայ ելանել եւ առնել վախճան աշխարհի, այլ ի ձայնէ կուանարկութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն։ Վասն որոյ եւ առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք ի դարբնաց, զհետ երթալով առասպելին, յաւուր միաշաբաթուոջ երիցս կամ չորիցս բախեն զսաղն, զի զօրացին, ասեն, շղթայքն Արտաւազդայ։"[1]

---

1 Մ. Խորենացի. Գիրք Բ. գլ. ԿԱ.։ Հմմտ. եւս Եղիշէ Կողբացի՝ «. . . ամն Արտաւազդ անուն արգելեալ էր ի գիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս . . .» ("Ընդդէմ ազանդոց" Ա. խե)։ Ուշագրութեան արժանի է, որ այստեղ Արտաւազդ ոչ թէ թագաւոր, այլ լոկ «ն» է կոչւում. ենթադրելու է, որ Եղիշէ ի նկատի է ունեցել մեզ յայտնի աւանդութեան տարբեր հիւսուածք։

Մհերի եւ Արտաւազդի աւանդութեանց ամենաթեթեւ համեմատութիւնն անգամ վկայում է յօգուտ նոցա նմանութեան. եւ իրօք, երկու դիւցազն եւս

ա. անզաւակ են,

բ. իրանց հայրերից անիծուած,

գ. գանգատում են իրանց վիճակի մասին հայրերի մահից յետ եւ պատասխան ստանում նոցա գերեզմանից,

դ. անհետանում որսորդութեան ժամանակ եւ

ե. փակւում այրի մէջ, որտեղ մնում են մինչեւ ցայսօր։

Ըստ խորենացու՝ "վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ եւ դեւ փոխանակ եդին". Մհերի մեծ մայրը փակում է նորան "7 դռան յետեւը", որ խորտակում է մանուկ դիւցազնն եւ դուրս գալիս լոյս աշխարհ։

Անտարակոյս մենք գործ ունենք այստեղ բաբելական առասպելի հետ, որ հնումն ազգէ ազգ էր թափառում. ամառն անցնելուց յետ, երբ երկրիս կանաչ զարդարանքն չորանում մեռնում է (Արտաշէս, Դաւիթ), կենսատու արեւն (Արտաւազդ, Մհեր) թագնւում է մութ ամպերի թանձր շերտերի տակ, որպէս զի ժամանակը լրանալիս կրկին իւր երեսն ցոյց տայ։ Հերոսի նոյն իսկ անունն ճշտում է այս ենթադրութիւնն. հին Պարսից լուսաբեր աստուածը Մ ի թ ր ա էր կոչւում, որ հաւանօրէն եւ հայ չաստուծոց տաճարն է մտել։

(Հմմտ. Աքեմենեան Արտաշէս Բ.ի արձանագրութիւնն Համադանում. "Ուրամազդա, Անահիտա եւ Միթրա թող ինձ փրկեն չարից...)

Ռուսաց ժողովուրդն այս առասպելն հետեւեալ կերպով է աւանդում. Սվետատոր դիւցազնն, որին "հողը այլ եւս չէ պահում", Մհերի նման, ճանապարհին պատահում է մի դագաղի: Մտնելով նորա մէջ, նա՝ շնչած իւր բոլոր ջանքին՝ այլ եւս չէ կարողանում այնտեղից դուրս գալ. նորա ուղեկից դիւցազն Իլեայի սրի ամէն մի հարուածից դագաղի երկաթներն միայն կրկնապատկւում են. այն ժամանակ Սվետատոր խնդրում է Իլեային թողնել նորան այնտեղ եւ փչելով նորան է աւանդում իւր դիւցազնական ոյժն:

Միթրան առաջին անգամ յիշւում է Վեդայում եւ Ավեստայում,[1] բայց ոչ իբրեւ արեւ, լուսին կամ մոլորակ, այլ իբրեւ լոյս, երկնից

---

1 Վեդան ("գիտելիք") Հնդիկների ամենահին կրոնական յիշատակարանն է, ինչպէս հին Կտակարանը՝ Հրէից. բաղկացած է 4 մասերից՝ Ռիգ (երգ) — Սամա (շարական) — Եաջուր (աղօթք) եւ Աթարվա — (կախարդական խօսք) կամ Բրահմայ վեդայից:

Ավեստան բուն իրանական աշխարհայեցողութեան գրաւոր աղբիւրն է, որ նմանապէս բաժանւած է 4 մասերի՝ ա. Եասնա (աղօթք) բ. Վիսպերեդ (նոյնը) գ. Վենդիդադ (կրօնական եւ հասարակական կեանքին վերաբերեալ օրէնսդրութիւններ դ. Խորդա (փոքր) Ավեստա, որ պարունակում է իւր մէջ փառաբանական երգեր Միթրային, Անահիտին եւ այլ աստուածոց նուիրած: Ամբողջ Ավեստայից մեզ հասել է միայն մի հատուած, պահլաւերէն թարգմանութեամբ, մինչդեռ մեծ մասը կորսուած է Յունաց եւ Պարթեւաց տիրապետութեան ժամանակ:

հետ անբաժան, որ մի կողմից Վառունայ (οὐρανός), միւսից՝ Ահուրայ է կոչւում. "հակելով առանց քնի, նա պահպանում է Մազդայի արարածը դեւերի չարեաց դէմ" (Ավեստայ, Ժ եաշտ)։ Իբրեւ լուսատու զօրութիւն, հետեւաբար նա պէտք է լինէր եւս ՀՐԻՆ եւ ՖԷՆԳՈՆ (ՀՐԻՆ) աղբիւր. Միթրան "տալիս է աճումն, տալիս է առատութիւն, տալիս է խաղինք, տալիս է ժառանգութիւն եւ կեանք" (Նոյնտեղ։) Բայց նա ոչ միայն մարմնաւոր բարիքների, այլ եւ հոգեւոր յատկութեանց պարգեւատու էր. թագաւորաց եւ պատերազմողների հովանաւոր՝ նա իրան ընկերակից ունէր Վերեթրագնա (այլապէս՝ Արտագնէս, յաղթութիւն), մեր Վահագն աստուածը, իբրեւ ճշմարտութեան պաշտպան՝ Սրաոշային։ Արամազդի եւ Ահրիմանի՝ բարի եւ չար դից մէջ նա ունէր իւր որոշ աստուածային տեղը. թէպէտեւ արարած Արամազդի, սակայն նա սերտ միացած էր նորա հետ այնպէս, ինչպէս լոյսը երկնակամարի հետ։ "Եւ ստեղծեցի Միթրային, որպէս զի նորան այնչափ բարձր պաշտեն, այնչափ մեծարեն, ինչպէս Ահուրամազդային, ինձ ինքնիսաւում է Իրանի ծայրագոյն աստուածը Զրադաշտին (Միհիր եաշտ I)։[1]

Տարւայ 7ՐԴ ամիսը եւ ամէն մի ամսի 16ՐԴ օրը նուիրւած էր Միթրայի պաշտամունքի

1 Franz Cumont, „Les Mystères de Mithra" Paris, 1902. p. 8. Գիրքս նոր է լոյս տեսած եւ պարունակում է իւր մէջ հոխ եւ թարմ նիւթ Միթրայի պաշտամունքի պատմութեան վերաբերեալ։

արարողութեանն. ըստ Կոնոսիասի՝ թագաւորն ինքն ի պատիւ նորա կատարում էր հեղման խորհուրդը եւ կաքաւում սրբազան պարեր։ Ամբողջ առաջաւոր Ասիայում մի ժամանակ իշխում էր Միթրականա կոչուած պաշտամունքն, որի ազդեցութիւնն նկատելի է նոյն իսկ հեթանոս Հայերի մէջ. հայ օրացոյցի Մէհէկանն անշուշտ "Միթրականի" աղաւաղումն է։

Միթրան բաւական ուշ է մտել արեւմտեան ազգերի դից տաճարը, իսկ հելլենական աշխարհին նա միշտ մնացել է օտար։ Ամենահին տեղեկութիւնը նորա մասին քաղում ենք Պլուտարքից, որ հետեւեալն է աւանդում Սիկիլիական ծովային աւազակների մասին՝ «Նոքա Ողիմպոսի վերայ օտար զոհեր էին մատուցանում եւ գաղտնի արարողութիւններ կատարում, որոնցից Միթրայինը, որ առաջ ժամանակի նոքա ցոյց տուած էին, մինչեւ այժմ պահպանել է։»[1] Յամենայն դէպս միայն Ա. դարի վերջերում (Ն. Ք.) Միթրայի մասին առաջին անգամ խօսել սկսեցին Հռոմում, ապա զարմանալի արագութեամբ Պարսից աստուծոյ պաշտամունքն տարածուեցաւ Հռոմէական ընդարձակ տէրութեան բոլոր մասերում.[2] նորա հետքերը գտնուած են ոչ միայն Բաբելոնում, Սիդոնում, Կեսարիայում, Տրապիզոնում, այլ եւ Մեմֆիսում, Բալկանեան թերակղզում, Սիկիլիայում, Կարթագոնում, ամբողջ Իտալիայում, Գերմանիայում, Սպա-

[1] Plutarchus: Vita Pompeji c. 24.
[2] Cumont, p. 31.

նիայում, անգամ Անգղիայում։ Մեր ժողովրդական «Մհերի դուռը» (Վանայ քարը) իր խորհրդաւոր անուան մէջ հաւանօրէն պահպանել է խուլ յիշողութիւն իրական լուսաբեր աստուծոյ մասին, որի տաճարը գուցէ Վանայ մտերքն է պարելու։

Շփուելով զանազան ազգերի դէց հետ, Միթրան բնականապէս պէտք է կորցներ իր սկզբնական գերը, որ նորան նուիրել էր հին պարսից կրօնը. Բաբելոնում նա ձուլուեցաւ Շամաշի (արեւի) հետ եւ սոյն նշանակութիւնն պահպանեց միւս ազգերի համար։

Միթրային՝ նորա խորագիր քարարձանները սովորաբար ցուլասպան են ներկայացնում. աջ եւ ձախ կողմում կանգնած են երկու պատանիներ՝ կաուտէս եւ կաուտոպատէս՝ լապտերները ձեռներին. առաջինը իր լապտերը վերեւ է բռնած, երկրորդը՝ գլխիվայր։ Այս երրորդութիւնն իսկապէս ձուլած է մի անձնաւորութեան մէջ. միեւնոյն արեւն է, որ առաւօտեան (գարնանը) բարձրանում է լեռների յետեւից, կէսօրին (ամառը) հասնում իր գագաթնակէտին, իսկ երեկոյեան (ձմեռը) իջնում երկնակամարից մթութեան անդունդը։

Հետեւեալ աւանդութիւնն, որ մանրամասն նկարագրում է Միթրայի ծնունդը եւ հերոսագործութիւնները, կարող էր միայն պարզամիտ խաշնարածների մէջ հիւսել, որոնց համար ցուլը հարկաւ սրբազան եւ թանկագին կենդանի պէտք է լինէր։

"Ծննդաժայռը" Միթրային աշխարհ է բերել մի գեսի ափին, սրբազան ծառի ստուերի ներքոյ, եւ միայն հովիւները ներկայ են եղել այս հրաշքին.[1] մանկան գլուխը ծածկած էր փոխուգական գդակով, աջ ձեռքում նա արդէն բռնած ունէր դանակ, ձախում՝ լապտեր, որ կը լուսաւորէր խաւարը։ Հովիւները մատուցին նորան իրանց խաշինքի եւ հունձքի "առջինեկները։" Մանուկ դիւցազն մերկ էր եւ հողմերի սաստկութեանն ենթարկուած. նա պատսպարեցաւ թզենու ճիւղերի տակ, նորա պտուղներից կերակրուելով եւ նորա տերեւներից իրան զգեստ շինելով։ Երբ երիտասարդական հասակը մտաւ, կամեցաւ իւր ոյժը փորձել երկրիս հզօրագոյն արարածների հետ. նորա առաջին մարտը Արեւի հետ էր. սա, զգալով իւր հակառակորդի առաւելութիւնն, չոքեց առջեւը եւ ճանաչեց նորա հովանաւորութիւնն. Միթրան հանեց նորա գլխից ճաճանչափայլ ճառագայթները եւ դրեց իւր գլխին։ Այդ օրից երկու դիւցազունք երդուեցին յաւիտեան միմեանց դաշնակից լինել։

Միթրայի երկրորդ հերոսագործութիւնը՝ վայրի ցուլը զսպելն էր։ Պատահելով կատաղի կենդանուն, նա բռնում է նորա եղջիւրներից եւ ցատկում նստում վերան. ցուլը փորձում է վայրի փախստեամբ գետին գլորել իւր բեռը, բայց շուտով զգում է իրան յաղթուած. Միթրան շալակում է նորան, բռնելով նորա

[1] Այլ արձաններում Միթրան ֆրիգէց է ծնում։

յետեւի ոտերից, եւ տանում իւր խրճիթը։ Բայց ազատութեան սովոր կենդանին չէ կարող հաշտուել իւր գերութեան հետ եւ կրկին փորձ է անում փախչելու. այն ժամանակ Արեւը ագռաւի միջոցաւ հրաման է ուղարկում Միթրային՝ սպանել անհնազանդ կենդանին. դիւցազնը հակառակ իւր կամաց կատարում է այս արիւնալի գործը։[1] Այստեղ տեղի ունեցաւ մի մեծ հրաշք. ցլի մարմնից երկիրը կանաչով ծածկուեցաւ, նորա ուղեղից գոյացաւ սերմ եւ արիւնից՝ հաղորդի թուփ. նորա հոգին Միթրայի շան ուղեկցութեամբ վերացաւ երկինք, որտեղ իբրեւ խաչինք հովանաւորող զօրութիւն Սիլվան անուամբ աստուածացաւ։ Այսպիսով ցլասպան դիւցազնը եղաւ ստեղծող բոլոր աշխարհային բարիքների, եւ այն մահուամբն, որ նա պատճառեց, ծնեց նոր կեանք, աւելի հարուստ եւ բարգաւաճ։[2]

Բայց սորանով դեռ չեն վերջանում Միթրայի արկածները. Ահրիման, չարութեան աստուածը, նախանձելով, անապատ դարձրեց կանաչազարդ դաշտերը, ցամաքացրեց ջրերը.

---

1 Ցլամարտը, որ ցայսօր պահպանուել է հարաւային Գաղղիայում եւ Սպանիայում, Միթրայի պաշտամունքի մնացորդը պէտք է համարել։

2 Museum für Alterthumskunde, Wiesbaden Nr. 239. Ամբողջ աւանդութիւնն փորագրուած է քառանկիւնի քարարձանի երկու երեսի վերայ, որի միջին մասը (ցուլ սպաննելը, ցուլը արդէն սպանուած) մի ժամանակ պաբտելի էր եղել։ Քարս պատկանում է Heddernheim'ում վերջերս գտնուած Միթրայի տաճարին։

սարսափած բնակիչք աղաչանօք դիմեցին իրանց հզօր պաշտպանին, եւ Միթրան նետով ծակեց ապառաժը, որտեղից յորդառատ ջուր սկսեց հոսել (Հմմտ. Մովսէս մարգարէն)։ Ջրհեղեղից յետ, որից միայն մի մարդ աղատուեցաւ իւր տապանի մէջ, երկիրը հրոյ ճարակ դարձաւ, բայց մարդիկ այս անգամ եւս փրկուեցին կորուստից աստուծոց օգնութեամբ։

Կատարելով իւր կոչումը երկրի վերայ՝ Միթրան նստաւ Արեւի քառալուծ կառքը եւ միւս դից հետ երկինք վերացաւ։[1]

Ահաւասիկ հին Պարսից աւանդութիւնը Միթրայի մասին, որ արեւելեան ազգերի մէջ ցայսօր դեռ կենդանի է, թէպէտ եւ այլայլուած եւ քայքայուած.[2] եւ յիրաւի, մեր ժողովրդական Մհերը, որ մենամարտում է "Ա-ԹՂԻՒ" հետ նոյն Միթրան է, որ յաղթում է երկրիս ճառագայթակիր լուսաբերին։

Բայց հայ աւանդութեան վերայ դրոշմել է բաբելոնական մի այլ առասպելի հետք եւս. աստեղամարտիկ Մհերը մեզ մօտ յիշեցնում է բաբելական վէպի դիւցազն Իզդուբարին (Ներբրովդին)։ Երբ Եղամացիք նւաճում են Երեխ քաղաքը, Իզդուբար կիսաստուած էա—բանիի օգնութեամբ սպանում է թշնամեաց խումբաբայ թագաւորին եւ փրկում քաղաքն։ Հերոսի վերայ սիրահարւում է Իշտար դիցուհին[3], բայց

---

1 Cumont pp. 109—116.

2 Տես իմ "Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ."

3 Իշտար Բաբելական դիցուհի է, որ համապա-

հերոսն, որպէս զի չենթարկուի իւր նախորդների՝ Իշտարի սիրականների՝ տխուր վիճակին, մերժում է նորա սէրն։ Անպատուած դիցուհին խընդրում է այն ժամանակ իւր հայր Անուին ստեղծել մի «երկնից աստղ», որ պէտք է ոչնչացընէ Իզդուբարին. բայց դիւցազնն այս անգամ եւս յաղթող է հանդիսանում իւր հաւատարիմ ընկերոջ օգնութեամբ։

Այստեղից սկսւում է մի մեծ պակասորդ։ Իզդուբարին ապա մենք գտնում ենք Հիւանդ, իսկ Էա-բանին՝ մեռած. իւր ընկերոջն կենդանացընելու, իսկ իրան առողջացընելու համար՝ նա ստիպւած է որոնել իւր պապ Պիր-Նապիշտին, որին մահն երբեք չէ վստահանում մերձենալ։ Երկար թափառելուց յետոյ նա վերջապէս հասնում է Պիրի բնակարանն եւ նորա միջոցաւ առողջանում։ Ծերունին պատմում է ջրհեղեղի զրոյցն, նաւ շինելն եւ իւր փրկւելն ընդհանուր կորստից։ Ապա առողջացած դիւցազնն վերադառնում է Երեխ եւ ստանում իւր ընկեր Էա-բանին[1]։

Պարսից, Հայոց եւ Բաբելացոց աստեղային աւանդութեանց փոխադարձ կապը անկասկած է։ Իրաւամբ ենթադրելով, որ իրանց աստեղագիտութեամբ հռչակւած Սումմեր եւ

տասխան է Venus մոլորակին. իցէ այս անունից է ծագել հնդ-եւրոպական «աստղ» — ἀστήρ, ستار, stella բառն։

[1] Ամբողջ վէպը բաղկացած է 12 տախտակներից եւ պատկանում է Ասուրբանիպալի (668—626) գրադարանին. գտնւած է 1854 թ. Նինուէյում։

Ակկադ ազգերի մէջ է պտրելու երկնային լուսատուների պաշտամունքի նախահայրենիքն, սակայն խոստովանելու ենք, որ ոչ մի աղբիւր, գրաւոր կամ բանաւոր, տակաւին չէ պարզած Բաբելոնի եւ Հնդ-Եւրոպական ազգերի մութ յարաբերութիւնները։

Ահաւասիկ Մհերի աւանդութեանց հնագոյն աղբիւրներն։ Ընտարակոյս, ժամանակի ընթացքում նոքա քայքայուել են եւ մեզ հասել միայն շնչին քանակութեամբ, այն եւս բաւական աղաւաղած։ Նոցա կապն Դաւթի վիպական զրոյցների հետ միանգամայն արուեստական է եւ տեղի է ունեցել վերոյիշեալ աստեղային առասպելի ազդեցութեան ներքոյ, որ դեռ հնումն կ'երգէին երգիչք Գողթան գաւառի։ Երկու ազգային հերոսներն բնաւ տարբեր են միմեանցից իրանց բարոյական նշանակութեամբ. Մհեր պատկանում է առասպելի, Դաւիթ՝ պատմութեանն. Մհեր մենամարտում է երկնային աստեղց հետ, Դաւիթ՝ հայրենեաց թշնամիների հետ. Մհեր իւր անմահութեամբ մնում է դից շարքը, իսկ Դաւթի համբաւն կազմում է իւր ազգի փառքն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

Յառաջաբան 1

Ա. «Հայ աստղները» 4

Բ. Դիւցազնական աւանդութեանց արուեստական կողմը 6

Գ. Տեղական մշակման ազդեցութիւնը 10

Հայ ժողովրդական դիւցազնական վէպի բովանդակութիւնը (Սասնասար եւ Ասլի մելիք Բաղդասար) 11

Մեծ Մհեր 13

Փոքր Մհեր 26

Հայ դիւցազնական վէպի պատմական սերմն . . 31

Դաւթի աւանդութեանց ծագումը. հերոսի բուն հայրենիքն, անմնաւորութիւնն եւ անունն. նորա բարոյական տիպարը 38

Մհերի առասպելն 56

ԸՆԴՐԵՑԻՆ ՄԱՏԵՆԱԳԻՐԸՆ

Ա. Գալէմքեարեան Հ. Գրիգորիս Վ., Ուսումնասիրութիւնք Լեհահայոց դատաստանագրոյն: 1. Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը: 2. Գոլէր. Իրաւունք Հայոց: 1890: 8° Երես՝ 85+59: Փր. 1.25

Բ. Մէնէվիշեան Հ. Գաբրիէլ, Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիզեանց. (պատկերազարդ:) 1890: 8° Երես՝ 50: Փր. 1.—

Գ. Տաշեան Հ. Յակոբոս, Ազաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ազաթանգեղեայ գրոց: 1891: 8° Երես՝ ԺԱ+159: Փր. 1.25

Դ. Դեմետրիոս Տաճի Արեւելեան Հայք ի Պուրսվինա: Թրգմ. Հ. Գ. Վ. Գալէմքեարեան: 1891: 8° Երես՝ 79: Փր. —.85

Ե. Տաշեան Հ. Յակոբոս Վ., Ուսումնասիրութիւնք Սոսոն-Կալիստենեայ Վարուց Աղեքսանդրի: 1892: 8° Երես՝ Դ+272: Փր. 3.—

Զ. Ալպէր Տրվիէ եւ Գ. Փիսոն, Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1892: 8° Երես՝ 82: Փր. 1.—

Է. Մաս Նիկ., Ամանդային ուղեւորութիւնից դէպ ի Հայս: Թրգմ. Մնոփրիոս Անոփեան: 1892: 8° Երես՝ 89: Փր. 1.25

Ը. Գարիէր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ: Հտ. Ա.: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1893: 8° Երես՝ Ժ+51: Փր. 1

Թ. Գալէմքեարեան Հ. Գրիգորիս Վ., Պատմութիւն հայ լրագրութեան: Հտ. Ա. 1794–1860: (1 լուսանկարով:) 1893: 8° Երես՝ 232: Փր. 2.50

Ժ. Կոմիտիի Փր. Կ., Մնոյութիւնք զրոց Դաւթի Անյաղթի։ Թրգմ. եւ յաւ. Հ. Յ. Վ. Տաշեան։ 1893։ 8° երես՝ Է+92։ Փր. 1.25

ԺԱ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Հայք յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ 1680—1779։ (1 զընկատիպ.) 1893։ 8° երես՝ Ժ+533։ Փր. 4.50

ԺԲ. Խալաթեան Գր., Զենոբ Գլակ, համեմատական ուսումնասիրութիւն։ 1893։ 8° երես՝ 78։ Փր. 1.—

ԺԳ. Տէր-Մովսիսեան Փարսադան, Հայ գիւղական տունը։ Թրգմ. Հ. Բ. Վ. Պիլէզիկճեան։ (6 տախտակ՝ 55 պատկ.։) 1894։ 8° երես՝ 103։ Փր. 2.—։

ԺԴ. Գարիէր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ. Հտր. Բ. կամ Յաւելուած։ Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան։ 1894։ 8° երես՝ ԺԱ+43։ Փր. 1.—

ԺԵ. Տաշեան Հ. Յ. Վ., Ուսումնասիրութիւնք հայերէն փոխառեալ բառից։ Ա.՝ Հ. Հիւբշման, Սեմական փոխառեալ բառեր հին հայերէնի մէջ։ Բ.՝ Փրոբէլման Կ., Յունական փոխառեալ բառեր հայերէնի մէջ։ Գ.՝ Հ. Հիւբշման, Հայկական Յատուկ անուանք։ 1894։ 8° երես՝ 9+145։ Փր. 2.—

ԺԶ. Տաշեան Հ. Յակոբոս Վ., Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք։ Հտր. Ա.։ Ա—Զ։ Ա. Նեմեսիոս։ Բ. Պրոկղ Դիադոխոս։ Գ. Խոսրովիկ։ Դ. Դիրք հերձուածոց կամ Եպիփան։ Ե. Պրոկղ։ Զ. Սեկունդոս իմաստասէր։ 1895։ 8° երես՝ ԺԲ+294։ Փր. 3.60

ԺԷ. Տաշեան Հ. Յակոբոս Վ., Հայկական աշխատասիրութիւնք հայազէտ Պ. Փէթիթէի, ի մի ամփոփուած եւ թարգմանուած հանդերձ ծանօթութեամբք։ 1895։ 8° երես՝ 202։ Փր. 2.50

ԺԸ. Տիդրեան Կ., Սեւ Ծովու ռուսական եզերքը։ 1895։ 8° երես՝ 192։ Փր. 2.—

ԺԹ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Դրանսիլուանիոյ Հայոց Մետրապոլիսը կամ Նկարագիր Կերպա Հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս։ 1896։ 8 երես՝ Թ+352։ Փր. 3.60

Ի. Տաշեան Հ. Յակոբոս Վ., "Վարդապետութիւն առաքելոց„ անվաւերական կանոնաց մատեանը. Թուղթ Յակոբայ առ Կողբատոս եւ Կանոնք Թադէի։ 1896։ 8° երես՝ Թ+442։ Փր. 6.—

ԻԱ. Տումաչէկ Վ., Սասուն եւ Տիգրիսի աղբերաց սահմանները: Պատմական եւ տեղագրական հետազօտութիւն: Մասն Առաջին՝ Պատմական տեղեկութիւնք Սասնոյ վրայ: Թրգմ. Հ. Բ. Պիլզիկեան: 1896: 8· Երես՝ Է+62: Փր. 1.—

ԻԲ. Կարրիէր Ա., Արգարու գրոյցը Մովսէս Խորենացւոյ Պատմութեան մէջ: Թրգմ. Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիշեան: 1897. 8° էջ ԺԶ+107: Փր. 1.50

ԻԳ. Յովհաննեան Հ. Ղ., Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ: Ուսումնասիրութիւնք եւ քաղուածներ: Մասն Ա. Ռամկօրէն մատենագրութիւնք: Տետր Ա: 1897, 8° էջ Ը+272: Փր. 4.—

ԻԴ. Յովհաննեան Հ. Ղ., Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի եւն: Տետր Բ: 1897: 8° էջ Ա—Ը+273—522: Փր. 3.—

ԻԵ. Գէյցէր Հ., Համառօտ պատմութիւն Հայոց: Թրգմ Հ. Գր. Վ. Գալէմքեարեան: Յաւելուածք թարգմանչին՝ 1. Ցանկ 1895—1897 Հայոց կոտորածներու առթիւ լոյս տեսած գրքերու: 2. Դաւազանագիրք Կաթողիկոսաց եւ Պատրիարքաց Հայոց: 1897 8° էջ Ը+130: Փր. 1.50

ԻԶ. Մէնէվիշեան Հ. Գաբրիէլ Վ., Գիրք (կամ յօդուած) գրելու արուեստը: Նորուս հեղինակներուն ուղղեալ քանի մը կարեւոր ակնարկութիւններ: Յաւելուած՝ Գիրք կարդալու արուեստը: 1898: 8° էջ Է+123: Փր. 1.25

ԻԷ. Խալաթեան Գր., Մ. Խորենացու նորագոյն աղբիւրների մասին քննադատական ուսումնասիրութիւնք: 1898: 8°, 56 էջ: Փր. 1.—

ԻԸ. Տաշեան Հ. Յ., Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գրչութեան արուեստին: (10 զնկատիպ պատկերով): 1898: 8° ԺԱ+202 էջ: Փր. 2.50

ԻԹ. Դաղբաշեան Յ., Փաւստոս Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարդախողը: Մ. Խորենացու աղբիւրների ուսումնասիրութիւն: 1898, 8° 175 էջ: Փր. 2.50

Լ. Մանրեան Լ., Հայերէն բարբառախօսութիւն: Թրգմ. ի ռուսերէնէ Հ. Գ. Վ. Մէնէվիշեան: 1899, 8° Երես՝ Է+26: Փր. —.50

ԼԱ. Քօսեան Հ. Յ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս: Հատոր Ա. Զմիւռնիա եւ Հայք. (պատկերազարդ:) 1899: 8° Երես՝ ԺԲ+369: Փր. 5.—

ԼԲ. Քօսեան Հ. Յ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս: Հատոր Բ. Զմիւռնիոյ վիճակին գլխաւոր քաղաքներն եւ Հայք. (պատկերազարդ:) 1899: 8° Երես՝ Ժ+161: Փր. 2.50

ԼԳ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ. Բ. Հատոր 1780—1825. (1 գնկատիպ:) 1899: 8°. Երես՝ Է+558: Փր. 5.—

ԼԴ. Դազանճեան Յ., Եւդոկիոյ Հայոց գաւառաբարբառը: 1899: 8° Երես՝ Է+124: Փր. 1.—

ԼԵ. Կարիէր Ա., Հեթանոս Հայաստանի ուխտ մեհեանները Ազաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ համեմատ: Թրգմ. Հ. Յակոբոս Վ. Տաշեան: (1 աշխարհագրական տախտակով:) 1899: 8° Երես՝ 48: Փր. —.70

ԼԶ. Տաշեան Հ. Յ., Ժողովածոյք առակաց Վարդանայ, ըստ Ն. Մառի, տեղեկատուութիւն եւ քաղուածքներ: 1900: 8° Երես՝ ԺԱ+198: Փր. 2.50

ԼԷ. Տաշեան Հ. Յ. Մատենագրական Մանր Ուսումնասիրութիւնք. (տես ԺԶ:) Մասն Բ: Է—Փ. Խրկաբ եւ իւր իմաստութիւնն, Ազապետոս եւ իւր Յորդորականք առ Յուստինիանոս, Թղթակցութիւն Աբգարու եւ Քրիստոսի ըստ Նորագիւտ արձանագրութեան Եփեսոսի, եւ Դէորգայ Պիսիդեայ Վեցօրեայք: 1901: 8° Երես՝ ԺԲ+388: Փր. 4.50

ԼԸ. Դր. Տէր-Պօղոսեան, Նկատողութիւններ Փաւստոսի Պատմութեան վերաբերեալ: 1901: 8° Երես Ը+110: Փր. 1.50

ԼԹ. Վէրէր Դր. Սիմոն, Աբարատը Ս. Գրոց մէջ: Թրգմ. Հ. Բառնաբաս Վ. Պիլէզիկճեան: 1901: 8° Երես՝ Ե+77: Փր. 1.—

Խ. Սամատաւցեան Յովհէփ Վ., Ասորեստանեայ եւ Պարսիկ սեպագիր արձանագրութիւնք կամ նոցին քաղուածք որոնք Նաբոնիդ-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին: 1901: 8° Երես՝ 262: Փր. 4.50

ԽԱ. Խաչատեանց Բագրատ, Հայ ժողովրդական դիւցազնական վէպը: 1903: 8° Երես՝ Ը+72: Փր. 1.—

[illegible]

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Գին է
1.	Տաճիճներբոյց դարի կատակը (1899) Տփղիս	15 կոպ.
2.	Թրլոր Դաւիթ և Մհեր (1899) Էջմիածին	40 „
3.	Общій очеркъ армянскаго богатырскаго Эпоса (Юбилейный Сборникъ въ честь Всев. Миллера 1900 Москва . .	—
4.	Иранскіе герои въ средѣ армянскаго народа (оттискъ съ XLV кн. Этногр. Обозр. 1900	—
5.	Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ. Պարիս	50 „
6.	Die armenische Heldensage. Berlin 1902	50 „
7.	Մի կարծիք հայ նախարարութեանց ծագման մասին. Պարիս 1902	50 „
8.	Die neuere armenische Litteratur. Berlin	—
9.	Ueber den Ursprung der armenischen Fürstenthümer	50 „

Շուտով լոյս կը տեսնի "Պատմութիւն Ս. բարեաց տէրութեան„։

Յանկացողները դիմեալ է՝

Dr. Bagrat Chalatianz

Berlin (Deutschland), Charlottenburg

Kantstrasse Nr. 94.